Հայաստանի Հանրապետության

# կենտրոնական բանկ

Տարեկան ֆինանսական հաշվետվություն

**2011**

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Անկախ աուդիտորական եզրակացություն ... 67

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն ... 69

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն ... 70

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն ... 72

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն ... 73

Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ ... 75

*1. Գործունեության նկարագրություն* ... 75

*2. Պատրաստման հիմունքներ* ... 76

*3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն* ... 79

*4. Տոկոսային եկամուտ* ... 99

*5. Տոկոսային ծախս* ... 99

*6. Զուտ օգուտ / (վնաս) փոխարժեքային տարբերություններից* ... 100

*7. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից* ... 101

*8. Այլ եկամուտ* ... 101

*9. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր* ... 101

*10. Այլ ծախսեր* ... 102

*11. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ* ... 102

*12. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ* ... 103

*13. Ներդրումային արժեթղթեր* ... 105

*14. Արժույթի միջազգային հիմնադրամ* ... 106

*15. Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր* ... 107

*16. Հիմնական միջոցներ* ... 109

*17. Ոչ նյութական ակտիվներ* ... 110

*18. Այլ ակտիվներ տեղական արժույթով* ... 110

*19. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ* ... 111

*20. Այլ փոխառություններ* ... 111

*21. Այլ պարտավորություններ տեղական արժույթով* ... 112

*22. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ* ... 112

*23. Սեփական կապիտալ* ... 113

*24. Պայմանական պարտավորություններ* ... 113

*25. Գործարքներ կապակցված կողմերի հետ* ... 114

*26. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ* ... 117

*27. Ֆինանսական գործիքների իրական արժեք* ... 118

*28. Ռիսկերի կառավարում* ... 121

*29. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն* ... 137

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

## Համախմբված ֆինանսական հաշվետվություններ և անկախ աուդիտորի եզրակացություն

**2011 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

# ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միակ հիմնադրին և Խորհրդին*

Մենք աուդիտի ենք ենթարկել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և նրա դուստր կազմակերպությունների` կից ներկայացված համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի բաժինների վերաբերյալ համառոտագիրը և այլ բացատրական տեղեկատվությունը:

*Համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության պատասխանատվությունը*

Ղեկավարությունը պատասխանատու է սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան պատրաստելու և ճշմարիտ ներկայացնելու, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

*Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է, անցկացված աուդիտի հիման վրա, կարծիք արտահայտել սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտները պահանջում են, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և պլանավորենք ու իրականացնենք աուդիտը` համախմբված ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտը ներառում է այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք ուղղված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ աուդիտորական ապացույցների ձեռքբերմանը: Աուդիտորական ընթացակարգերը` ներառյալ խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկի գնահատումը, ընտրվում են աուդիտորի կողմից: Այդ ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող կազմակերպության ներքին վերահսկողության համակարգը, տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր մշակելու, սակայն ոչ ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության մասին կարծիք

արտահայտելու նպատակով: Աուդիտը ներառում է նաև կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

*Կարծիք*

Մեր կարծիքով, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ֆինանսական վիճակը 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը` Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Էրնսթ ընդ Յանգ ՓԲԸ

*Աուդիտի բաժնի*
*հիմնադիր գործընկեր* **Դմիտրի Վայնշտեյն**

*Գլխավոր տնօրեն Մ. Ալեքսանդարյան` ի դեմս լիազորված անձ Է.Հայրապետյանի (գործող 2011 թվականի սեպտեմբերի 1-ին տրված լիազորագրի հիման վրա)* **Էրիկ Հայրապետյան**

**2012 թվականի մարտի 30**


**Էրնսթ ընդ Յանգ ՓԲԸ**
Հյուսիսային պող. 1, գրասենյակ 27
Երևան, 0001, Հայաստան

Հեռ.` +374 10 500790
+374 10 500705
Ֆաքս` +374 10 500706
**www.ey.com/cis**

## *Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար*

*հազար ՀՀ դրամ*

| | Ծանոթա-գրություն | 2011 | 2010 (վերահաշ-վարկված) |
|---|---|---|---|
| Տոկոսային եկամուտ | 4 | 11,880,230 | 9,534,614 |
| Տոկոսային ծախս | 5 | (10,144,881) | (16,652,276) |
| **Զուտ տոկոսային եկամուտ/(ծախս)** | | **1,735,349** | **(7,117,662)** |
| Կոմիսիոն եկամուտ | | 70,910 | 61,399 |
| Կոմիսիոն ծախս | | (350,914) | (438,138) |
| **Կոմիսիոն և այլ վճարների տեսքով զուտ ծախս** | | **(280,004)** | **(376,739)** |
| Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից | 6 | 19,181,238 | (12,637,826) |
| Զուտ իրացված օգուտ/(վնաս) վաճառքի համար մատչելի ակտիվների գծով | | 60,729 | (21,168) |
| Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից | 7 | 1,997,356 | 2,943,175 |
| Այլ եկամուտ | 8 | 2,804,325 | 1,901,653 |
| Արժեզրկման պահուստին հատկացումներ | 11,13 | (11,564,863) | - |
| Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր | 9 | (2,383,348) | (226,802) |
| Այլ ծախսեր | 10 | (10,987,815) | (13,061,942) |
| Շահութահարկ | | (99,043) | - |
| **Տարվա շահույթ/(վնաս)** | | **463,924** | **(28,597,311)** |
| **Այլ համապարփակ եկամուտ** | | | |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներից չիրացված օգուտներ/(վնասներ) | | 470,530 | (235,829) |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների գծով (օգուտներ)/վնասներ՝ վերադասակարգված շահույթ կամ վնաս | | (60,729) | 21,168 |
| **Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ** | | **873,725** | **(28,811,972)** |

*Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2012 թվականի մարտի 27-ին ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից և վերջինիս անունից ստորագրվել:*

**Ա. ՋԱՎԱԴՅԱՆ**
**Նախագահ**



**Հ. ՀԱԿՈԲՅԱՆ**
**Գլխավոր հաշվապահ**



---

*Կից ներկայացված 1 - 29 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:*

## *Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ*

*հազար ՀՀ դրամ*

| | Ծանոթա-գրություն | 2011 | 2010 (վերահաշ-վարկված) | 2009 (վերահաշ-վարկված) |
|---|---|---|---|---|
| ԱԿՏԻՎՆԵՐ | | | | |
| ***Ակտիվներ արտարժույթով*** | | | | |
| Կանխիկ դրամ | | 5,013,113 | 7,552,047 | 7,776,292 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 11 | 236,415,264 | 158,102,101 | 221,678,070 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 12 | 344,720,503 | 404,632,917 | 459,234,675 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 13 | 1,646 | 917 | 917 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 13 | 137,340,298 | 95,678,521 | 25,171,087 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 14 | 76,489,346 | 63,670,237 | 101,621,324 |
| Այլ ակտիվներ | | 1,228,086 | 874,492 | 666,956 |
| | | **801,208,256** | **730,511,232** | **816,149,321** |
| ***Ակտիվներ տեղական արժույթով*** | | | | |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 15 | 149,245,576 | 70,615,499 | 70,735,139 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 13 | 106,922,985 | 88,705,765 | 121,204,193 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 13 | 3,265,916 | 4,132,916 | 3,862,867 |
| Հիմնական միջոցներ | 16 | 38,369,456 | 26,312,189 | 15,762,787 |
| Ոչ նյութական ակտիվներ | 17 | 640,389 | 583,179 | 427,907 |
| Այլ ակտիվներ | 18 | 6,253,627 | 3,752,261 | 2,451,325 |
| | | **304,697,949** | **194,101,809** | **214,444,218** |
| **Ընդամենը ակտիվներ** | | **1,105,906,205** | **924,613,041** | **1,030,593,539** |
| | | | | |
| ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ | | | | |
| ***Պարտավորություններ արտարժույթով*** | | | | |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 19 | 104,346,523 | 99,650,034 | 150,616,174 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 22 | 3,974,934 | 3,989,112 | 1,329,188 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 12 | 1,771,245 | 694,841 | 36,588 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 14 | 306,460,839 | 278,087,230 | 267,820,110 |
| Այլ փոխառություններ | 20 | 38,846,294 | 27,599,809 | 28,309,397 |
| Այլ պարտավորություններ | | 153,901 | 146,096 | 206,504 |
| | | **455,553,736** | **410,167,122** | **448,317,961** |

*Կից ներկայացված 1 - 29 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:*

| | Ծանոթագրություն | 2011 | 2010 (վերահաշվարկված) | 2009 (վերահաշվարկված) |
|---|---|---|---|---|
| ***Պարտավորություններ տեղական արժույթով*** | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | | 398,777,362 | 348,164,734 | 320,669,631 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 19 | 166,827,933 | 80,825,771 | 53,204,221 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 22 | 80,229,419 | 106,545,573 | 177,194,796 |
| Թողարկված պարտատոմսեր | | 963,593 | - | - |
| Այլ պարտավորություններ | 21 | 3,255,800 | 1,353,894 | 853,302 |
| | | **650,054,107** | **536,889,972** | **551,921,950** |
| **Ընդամենը պարտավորություններ** | | **1,105,607,843** | **947,057,094** | **1,000,239,911** |
| ***Սեփական կապիտալ*** | | | | |
| Թողարկված կապիտալ | 23 | 100,000 | 100,000 | 100,000 |
| Գլխավոր պահուստ | 23 | 17,389,049 | 17,389,049 | 11,392,622 |
| Լրացուցիչ կապիտալ | 13 | 107,531,884 | 85,663,194 | 85,663,194 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ | | (1,218,959) | (1,628,760) | (1,414,100) |
| Կուտակված վնաս | | (123,503,612) | (123,967,536) | (65,388,088) |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | | **298,362** | **(22,444,053)** | **30,353,628** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | | **1,105,906,205** | **924,613,041** | **1,030,593,539** |

*Կից ներկայացված 1 - 29 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:*

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն
## 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*հազար ՀՀ դրամ*

| | Թողարկված կապիտալ | Գլխավոր պահուստ | Լրացուցիչ կապիտալ | Վաճառքի համար մատչելի ակտիվների վերագնահատման պահուստ | Կուտակված վնաս (վերահաշվարկված) | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|
| **Մնացորդը 2010 թ. հունվարի 1-ին** | 100,000 | 11,392,622 | 85,663,194 | (1,414,100) | (65,388,088) | 30,353,628 |
| Մասհանումներ գլխավոր պահուստին | - | 5,996,427 | - | - | (5,996,427) | - |
| Շահույթի բաշխում ՀՀ կառավարությանը | - | - | - | - | (23,985,710) | (23,985,710) |
| Տարվա վնաս (վերահաշվարկված) | - | - | - | - | (28,597,311) | (28,597,311) |
| Այլ համապարփակ եկամուտ | - | - | - | (214,661) | - | (214,661) |
| **Մնացորդը 2010թ. դեկտեմբերի 31-ին (վերահաշվարկված)** | 100,000 | 17,389,049 | 85,663,194 | (1,628,760) | (123,967,536) | (22,444,053) |
| ՀՀ կառավարության ցպահանջ անտոկոս մուրհակի տրամադրում | - | - | 21,868,690 | - | - | 21,868,690 |
| Տարվա շահույթ | - | - | - | - | 463,924 | 463,924 |
| Այլ համապարփակ եկամուտ | - | - | - | 409,801 | - | 409,801 |
| **Մնացորդը 2011 թ. դեկտեմբերի 31-ին** | 100,000 | 17,389,049 | 107,531,884 | (1,218,959) | (123,503,612) | 298,362 |

*Կից ներկայացված 1 - 29 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:*

# Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն 2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համար

*հազար ՀՀ դրամ*

| | Ծանոթագրություն | 2011 | 2010 |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Տարվա շահույթ/ (վնաս) | | 463,924 | (28,597,311) |
| Մաշվածություն և ամորտիզացիա | | 1,223,482 | 731,035 |
| Արժեզրկման պահուստին հատկացումներ | | 11,564,863 | - |
| Հիմնական միջոցների վաճառքից վնաս | | 367,180 | 5,302 |
| Ստացվելիք տոկոսներ | | 661,507 | 577,853 |
| Վճարվելիք տոկոսներ | | 103,910 | 657,448 |
| Զուտ (օգուտ)/ վնաս դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից | | (19,326,197) | 12,099,588 |
| Զուտ վնաս իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների վերագնահատումից | | 1,450,482 | 1,939,306 |
| Այլ | | 238 | (32) |
| **Դրամական հոսքեր նախքան գործառնական ակտիվներում և պարտավորություններում փոփոխությունները** | | **(3,490,611)** | **(12,586,811)** |
| **Գործառնական ակտիվների (աճ) / նվազում** | | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | | (65,998,845) | 882,671 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | | 80,622,949 | 26,861,008 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | | 12,099 | 23,797 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | | 4,060,543 | 8,298,058 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | | (33,289,368) | (67,685,078) |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | | (78,951,506) | (30,946) |
| Այլ ակտիվներ | | (1,845,736) | (1,421,373) |
| **Գործառնական պարտավորությունների աճ / (նվազում)** | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | | 50,612,628 | 27,495,103 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և մնացորդներ | | 84,090,265 | (16,270,879) |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | | (8,199,434) | 6,923,690 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | | (26,489,725) | (68,085,395) |
| Թողարկված պարտատոմսեր | | 963,593 | - |
| Այլ պարտավորություններ | | 1,283,912 | 190,940 |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից** | | **3,380,764** | **(95,405,215)** |

| | Ծանոթագրություն | 2011 | 2010 |
|---|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | | (13,729,298) | (11,446,498) |
| Հիմնական միջոցների վաճառք | | 24,160 | 5,487 |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից** | | **(13,705,138)** | **(11,441,011)** |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | | |
| Վարկերի ստացում | | 70,340,555 | 64,703,960 |
| Վարկերի մարում | | (39,530,684) | (44,426,131) |
| **Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից** | | **30,809,871** | **20,277,829** |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ / (նվազում)** | | **20,485,497** | **(86,568,397)** |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբին | | 139,497,528 | 236,032,987 |
| Արտարժույթի փոխարկման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | | 7,761,602 | (9,967,062) |
| **Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջին** | 26 | **167,744,627** | **139,497,528** |
| ***Լրացուցիչ տեղեկատվություն*** | | | |
| Ստացված տոկոսներ | | 11,218,722 | 8,956,761 |
| Վճարված տոկոսներ | | (10,248,791) | (17,309,724) |

*Կից ներկայացված 1 - 29 ծանոթագրությունները հանդիսանում են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:*

# *2011 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններ*

## *1. Գործունեության նկարագրություն*

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը (այսուհետ՝ Բանկ) Խմբի մայր կազմակերպությունն է: Այն իրավաբանական անձ է, որի միակ հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է:

Բանկի իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյանի 6: 2011 թվականի ընթացքում Բանկի աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 765 (2010թ.՝ 728):

Բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է Հայաստանի Հանրապետությունում, որն այն իրագործում է դրամավարկային քաղաքականության մշակման և իրականացման միջոցով: Ի լրումն իր հիմնական խնդրին, Բանկը նաև պատասխանատու է.

- Հայաստանի Հանրապետության ֆինանսական համակարգի կայունության, իրացվելիության, վճարունակության և բնականոն գործունեության համար անհրաժեշտ այլ պայմանների ապահովման, և
- գործուն վճարահաշվարկային համակարգ ստեղծելու և զարգացնելու համար:

Բանկը նաև՝

- թողարկում է Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը և կարգավորում դրամաշրջանառությունը,
- կազմակերպում և կարգավորում է փողերի «լվացումը» և ահաբեկչության ֆինանսավորումը կանխարգելող միջոցառումներ,
- Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործակալն ու խորհրդատուն է,
- լիցենզավորում է առևտրային բանկերի և, եթե նախատեսված է օրենքով, այլ անձանց, և վերահսկում ու կարգավորում է վերջիններիս գործունեությունը,
- առևտրային բանկերի համար վերջին ատյանի վարկատու է, ինչպես նաև
- տիրապետում, օգտագործում և տնօրինում է Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստները:

**Բանկի դուստր ընկերությունները ներկայացված են ստորև**

| Անվանումը | Հիմնադրման երկիրը | Հիմնական գործունեությունը | Վերահսկվող % | | Հիմնադրման ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|
| | | | 2011 թ. | 2010 թ. | |
| «Արմենիան Քարդ» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վճարահաշվարկային ծառայություններ | 59 | 66 | մարտ 2000 թ. |
| «Հայինկասացիա» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Դրամ. միջոցների փոխադրումներ | 100 | 100 | ապրիլ 1998 թ. |
| Համահայկական բանկ | Հայաստանի Հանրապետություն | Բանկային գործունեություն | 100 | 100 | դեկտեմբեր 2009 թ. |
| «Ազգային հիփոթեքային ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Հիփոթեքային գործունեություն | 100 | 100 | հունիս 2009 թ. |
| «Բնակարան երիտասարդներին» ՈւՎԿ ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Հիփոթեքային գործունեություն | 100 | 100 | փետրվար 2010 թ. |
| «Փոքր և միջին բիզնեսի վարկավորման աջակցություն» ՓԲԸ | Հայաստանի Հանրապետություն | Վարկավորման աջակցություն | 100 | 100 | դեկտեմբեր 2010 թ. |

## *2. Պատրաստման հիմունքներ*

### 2.1. Համապատասխանության մասին հայտարարություն

Սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

### 2.2. Չափման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են պատմական արժեքի սկզբունքի հիման վրա՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի: Օրինակ՝ առևտրային և վաճառքի համար մատչելի արժեթղթերը, ածանցյալ ֆինանսական գործիքները գնահատվել են իրական արժեքով:

### 2.3. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նաև Բանկի ֆունկցիոնալ արժույթը և այն արժույթը, որով ներկայացված են սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ դրամով՝ հազարների ճշտությամբ, եթե այլ բան նշված չէ:

## 2.4. Գնահատումների և դատողությունների կիրառում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում, ղեկավարությունը օգտագործել է իր դատողությունները և գնահատումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարները որոշելիս: Կիրառված էական դատողությունները և գնահատումները հետևյալն են.

- Եթե համախմբված ֆինանսական հաշվետվություններում արտացոլվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը հնարավոր չէ որոշել ակտիվ շուկայի գների հիման վրա, ապա այն որոշվում է տարբեր գնահատման մոդելների կիրառմամբ՝ ներառյալ մաթեմատիկական մոդելները: Այդպիսի մոդելների համար ելակետային տվյալները որոշվում են որպես դիտարկվող շուկաների տվյալներ, եթե դա հնարավոր է: Հակառակ դեպքում՝ իրական արժեքի որոշման համար կիրառում են դատողություններ:
- Խումբը պարբերաբար կատարում է վարկերի և դեբիտորական պարտքերի արժեզրկված լինելու վերլուծություն: Սեփական փորձից ելնելով Բանկը արժեզրկումից վնասները գնահատելիս օգտագործում է իր սուբյեկտիվ դատողություններն այն դեպքերում, երբ վարկառուն ֆինանսական դժվարություն է կրում և համանման վարկառուների վերաբերյալ չկա բավարար փաստացի տեղեկատվություն: Խումբը համանման կերպով գնահատում է ապագա դրամական հոսքերի փոփոխությունները դիտարկվող տեղեկատվության հիման վրա, որը վկայում է վարկառուի պարտավորությունների մարման ոչ բարենպաստ կարգավիճակի, կա՛մ պետական, կա՛մ տեղական տնտեսական պայմանների փոփոխության մասին, որոնք վերագրվում են տվյալ խմբի ակտիվների գծով պարտավորությունների չկատարման դեպքերին: Ղեկավարությունն օգտագործում է գնահատումներ՝ հիմնվելով ակտիվների նկատմամբ համանման վարկային ռիսկի բնութագրերի և վարկերի ու դեբիտորական պարտքերի խմբերի արժեզրկման օբյեկտիվ հայտանիշների պատմական տվյալների վրա: Սեփական փորձից ելնելով Բանկն օգտագործում է իր սուբյեկտիվ դատողությունները դիտարկվող վարկերի և դեբիտորական պարտքերի վերաբերյալ տեղեկատվության ճշգրտման համար՝ ընթացիկ իրավիճակը արտացոլելու նպատակով:

## 2.5. Համեմատական տվյալների վերահաշվարկ

2011 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ընթացքում Խմբի ղեկավարությունը հայտնաբերել է նախորդ ժամանակաշրջաններին վերաբերող հետևյալ սխալները՝

- պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ արտարժույթով.
  - 2009թ. թվաբանական սխալի արդյունքում Խումբը ԱՄՀ-ի հանդեպ արտարժույթով պարտավորությունների գումարը 95,263,527 հազար դրամի փոխարեն ներկայացրել է 92,263,527 հազար դրամի չափով;

- 2010 և 2009թթ. Խումբը սխալմամբ դասակարգել էր ԱՄՀ-ի հանդեպ ՀՓԻ-ով արտահայտված պարտավորությունները որպես տեղական արժույթով (ՀՀ դրամ) պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ;

➢ ՀՀ կառավարության հետ արժութային ֆորվարդ.

- 2010թ. Խումբը չի ճանաչել արժութային ֆորվարդի պայմանագիրը ՀՀ կառավարության հետ: Պայմանագրի համաձայն Խումբը պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը պետք է փոխարկի բյուջետային ուղերձում ամրագրված փոխարժեքներով:

2010 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համեմատական տվյալները վերահաշվարկվել են հետևյալ կերպ.

*հազար ՀՀ դրամ*

| | Ըստ նախորդ հաշվետվության | Վերահաշվարկ | Վերահաշվարկված |
|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | |
| **Պարտավորություններ արտարժույթով** | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 19,478 | 675,363 | 694,841 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 82,284,509 | 195,802,721 | 278,087,230 |
| **Պարտավորություններ տեղական արժույթով** | | | |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 195,802,721 | (195,802,721) | - |
| **Կուտակված վնաս** | (123,292,173) | (675,363) | (123,967,536) |
| **Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն** | | | |
| Զուտ վնաս փոխարժեքային տարբերություններից | (11,962,463) | (675,363) | (12,637,826) |
| Տարվա վնաս | (27,921,948) | (675,363) | (28,597,311) |
| **Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ** | (28,136,609) | (675,363) | (28,811,972) |

2009 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա համապատասխան ցուցանիշները վերահաշվարկվել են հետևյալ կերպ.

| | Ըստ նախորդ հաշվետվության | Վերահաշվարկ | Վերահաշվարկված |
|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | |
| **Պարտավորություններ արտարժույթով** | | | |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 92,263,527 | 175,556,583 | 267,820,110 |
| **Պարտավորություններ տեղական արժույթով** | | | |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 172,556,583 | (172,556,583) | - |

## *3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն*

### 3.1. Փոփոխություններ հաշվապահական հաշվառման քաղաքականությունում

Խումբը տարվա ընթացքում ընդունել է հետևյալ ՖՀՄՍ-ի փոփոխությունները և ՖՀՄՄԿ-ի նոր մեկնաբանությունները: Ստորև ներկայացված են փոփոխությունների հիմնական ազդեցությունները.

***ՀՀՄՍ 24** «Կապակցված կողմերի բացահայտումներ» (նոր խմբագրություն)*

ՀՀՄՍ 24-ի նոր խմբագրությունը, որը հրապարակվել է 2009թ. նոյեմբերին և ուժի մեջ է մտնում 2011 թվականի հունվարի 1-ից և այդ ամսաթվից հետո սկսվող ժամանակաշրջանների համար, պարզեցնում է պետության կողմից վերահսկվող կազմակերպությունների տեղեկատվության բացահայտման նկատմամբ պահանջները, ինչպես նաև հստակեցնում է կապակցված կողմի սահմանումը: Անցյալում պետության կողմից վերահսկվող կամ նշանակալի ազդեցության ենթարկվող կազմակերպություններից պահանջվում էր պետության կողմից վերահսկվող կամ նշանակալի ազդեցության ենթարկվող այլ կազմակերպությունների հետ կատարված բոլոր գործարքների վերաբերյալ բացահայտումներ: Վերանայված ստանդարտը պահանջում է այս գործարքների վերաբերյալ բացահայտում միայն այն դեպքում, երբ դրանք անհատական կամ խմբային հիմունքներով նշանակալի են: Վերանայված ստանդարտն ազդեցություն չունի Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***Լրացումներ ՀՀՄՍ 32** «Ֆինանսական գործիքներ. ներկայացում» ստանդարտում՝ «Լրացուցիչ բաժնետոմսերի ձեռքբերման իրավունքների թողարկման դասակարգում»*

2009 թվականի հոկտեմբերին ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՀՀՄՍ 32-ի լրացումներ: Կազմակերպությունները պետք է կիրառեն այդ լրացումները 2010թ. փետրվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Լրացումը փոփոխում է ՀՀՄՍ 32-ում ֆինանսական պարտավորության սահմանումը՝ դասակարգելով իրավունքների թողարկումը և որոշակի օպցիոններն ու երաշխիքները որպես սեփական կապիտալի գործիքներ: Այն կիրառելի է, եթե իրավունքները տրամադրված են կազմակերպության սեփական կապիտալի միևնույն դասի ոչ ածանցյալ գործիքների սեփականատերերին համամասնական սկզբունքով՝ կազմակերպության բաժնային գործիքների հաստատուն քանակ ցանկացած արժույթով և հաստատուն գումարով ձեռք բերելու նպատակով: Լրացումը ազդեցություն չունի Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

***ՖՀՄՄԿ 19** «Ֆինանսական պարտավորությունների մարումը սեփական կապիտալի գործիքներով»*

ՖՀՄՄԿ 19 մեկնաբանությունը հրապարակվել է 2009թ. նոյեմբերին և ուժի մեջ է մտնում 2010 թ. հուլիսի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Մեկնաբանությունը պարզաբանում է հաշվառումը այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը մարելու պայմանները վերանայվում են և հանգեցնում կազմակերպության կողմից ֆինանսական պարտա-

վորության ամբողջովին կամ մասնակի մարման հաշվին պարտատիրոջ օգտին բաժնային գործիքների թողարկմանը: Այս մեկնաբանությունը ազդեցություն չունի Խմբի համախմբված ֆինանսական հաշվետվությունների վրա:

*ՖՀՄՍ-ների կատարելագործումներ*

2010թ. մայիսին ՖՀՄՍԽ–ն թողարկել է ստանդարտների լրացումների երրորդ ժողովածուն` մասնավորապես անհամապատասխանությունների վերացման և տեքստերի հստակեցման նպատակով: Լրացումների մեծ մասը ուժի մեջ է մտնում 2011թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Յուրաքանչյուր ստանդարտի գծով գոյություն ունեն առանձին անցումային դրույթներ:

«ՖՀՄՍ-ների կատարելագործումներում» ներառված լրացումների ազդեցությունը Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության, ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքների վրա ներկայացված է ստորև.

- ՖՀՄՍ 3 «Ձեռնարկատիրական գործունեության միավորումներ»` սահմանափակում է չվերահսկող բաժնեմասի գնահատման մեթոդի ընտրության իրավունքի կիրառման շրջանակը: Այնտեղ նշվում է, որ չվերահսկող բաժնեմասի միայն այն տարրերը, որոնք կազմում են սեփականության ներկա բաժնեմաս և լուծարման դեպքում դրա սեփականատիրոջը իրավունք տալիս կազմակերպության զուտ ակտիվների համամասնական բաժնի նկատմամբ, պետք է չափվեն իրական արժեքով կամ ձեռք բերողի որոշելի զուտ ակտիվներում սեփականության ներկա գործիքների համամասնական բաժնով:
- ՖՀՄՍ 7 «Ֆինանսական գործիքներ` բացահայտումներ» ստանդարտը ներմուծում է քանակական տեղեկատվության և վարկային ռիսկի գծով լրացուցիչ բացահայտումներ: Լրացուցիչ պահանջները ունեն չնչին ազդեցություն, քանի որ այդ տեղեկատվությունը արդեն իսկ ներկայացված է:
- ՖՀՄՍ 1, ՖՀՄՍ 3, ՀՀՄՍ 1, ՀՀՄՍ 27, ՀՀՄՍ 34 ստանդարտներում և ՖՀՄՄԿ 13 մեկնաբանությունում այլ լրացումները չեն ունենա որևիցե ազդեցություն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության, ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքների վրա:

Ստանդարտների և մեկնաբանությունների հետևյալ լրացումները չեն ունեցել որևէ ազդեցություն Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության, ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքների վրա:

- ՖՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների առաջին անգամ որդեգրում»` ՖՀՄՍ 7-ին համապատասխան համեմատական տեղեկատվության բացահայտման պահանջների սահմանափակ կիրառման շրջանակների ինքնակամ բացառում առաջին անգամ կիրառողների համար:
- ՖՀՄՍ 7 «Առաջին անգամ ՖՀՄՍ որդեգրողների համար բացահայտումներ»:
- ՖՀՄՄԿ 14 «Նվազագույն ֆինանսավորման պահանջի գծով կանխավճարներ»:

### 3.2. Համախմբման հիմքերը

Այն դուստր կազմակերպությունները, որոնցում Խմբին պատկանում է քվեարկող բաժնետոմսերի կեսից ավելին կամ գործառնությունների նկատմամբ վերահսկողությունը իրականացվում է այլ կերպ՝ համախմբվում են: Դուստր կազմակերպությունները համախմբվում են սկսած այն ամսաթվից, երբ դրանց նկատմամբ վերահսկողությունն անցել է Խմբին, և այլևս չեն համախմբվում սկսած այն ամսաթվից, երբ տեղի է ունենում վերահսկողության կորուստ: Ներխմբային բոլոր հաշիվները, գործարքները, ներխմբային գործունեության արդյունք հանդիսացող չիրացված օգուտներն ու վնասները և շահաբաժինները ամբողջությամբ բացառվում են: Չիրացված վնասները նույնպես բացառվում են, բացառությամբ այն դեպքերի, երբ գործարքը վկայում է փոխանցվող ակտիվի արժեզրկման մասին: Անհրաժեշտության դեպքում դուստր կազմակերպությունների հաշվապահական հաշվառման քաղաքականությունում կատարվում են փոփոխություններ Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխանելու նպատակով:

Դուստր կազմակերպության բաժնեմասի փոփոխությունը առանց վերահսկման փոփոխության հաշվառվում է որպես սեփական կապիտալի հետ գործարք: Կորուստները վերագրվում են չվերահսկող բաժնեմասին, նույնիսկ եթե այն հանգեցնում է բացասական մնացորդի:

Եթե Խումբը կորցնում է դուստր կազմակերպության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաճանաչում է դուստր կազմակերպության ակտիվները (ներառյալ՝ գուդվիլը) և պարտավորությունները, ցանկացած չվերահսկող բաժնեմասի հաշվեկշռային արժեքը, սեփական կապիտալում արտացոլվող կուտակված փոխարկման տարբերությունները, ցանկացած պահպանված ներդրման իրական արժեքը և շահույթ կամ վնասում ցանկացած ավելցուկը կամ պակասորդը, իսկ նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված մայր կազմակերպության բաժնեմասին վերագրվող տարրերը դասակարգվում են շահույթ կամ վնաս կամ չբաշխված շահույթ՝ ելնելով համապատասխան պահանջներից:

### 3.3. Արտարժույթի փոխարկում և արտարժութային հոդվածների ներկայացում

Արտարժույթով իրականացված գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթի փոխանակումից ստացված օգուտները և վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես արտարժութային գործառնություններից զուտ օգուտներ/վնասներ: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները, որոնք գնահատված են սկզբնական արժեքով, փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով:

Արտարժույթով իրականացվող գործարքների պայմանագրային փոխարժեքի և այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքի տարբերությունը ներառվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ:

Խմբի կողմից համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով օգտագործվել են հետևյալ փոխարժեքները.

| | 2011 թ. դեկտեմբերի 31 | 2010 թ. դեկտեմբերի 31 |
|---|---|---|
| ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար | 385.77 | 363.44 |
| ՀՀ դրամ/1 եվրո | 498.72 | 481.16 |
| ՀՀ դրամ/1 ՀՓԻ | 592.26 | 559.71 |

### 3.4. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Խումբը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ է համարում կանխիկ դրամը և բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված նոստրո հաշիվները, Արժույթի միջազգային հիմնադրամում (ԱՄՀ) տեղաբաշխված ՀՓԻ միջոցները:

### 3.5. Ֆինանսական գործիքներ

*Սկզբնական ճանաչում*

Համաձայն ՀՀՄՍ 39-ի դրույթների՝ ֆինանսական գործիքները դասակարգվում են համապատասխանաբար որպես ֆինանսական ակտիվներ՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ, վաճառքի համար մատչելի ակտիվներ: Ֆինանսական ակտիվները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չճանաչվող ներդրումների պարագայում՝ գումարած ուղղակիորեն վերագրելի գործարքային ծախսերը: Խմբի կողմից ֆինանսական ակտիվները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում կարող են վերադասակարգվել ստորև ներկայացված դեպքերում:

*Ճանաչման ամսաթիվ*

Ֆինանսական ակտիվների բոլոր կանոնավոր գնումներն ու վաճառքներն արտացոլվում են վերջնահաշվարկի ամսաթվով: Կանոնավոր կերպով գնմանը կամ վաճառքին են վերաբերում ֆինանսական ակտիվների այնպիսի գնումը կամ վաճառքը, որը պահանջում է ակտիվի մատակարարում՝ շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարար սովորույթով սահմանված ժամկետի ընթացքում:

*Ֆինանսական ակտիվներ՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող*

Որպես առևտրական նպատակով պահվող դասակարգված ֆինանսական գործիքները ներառվում են «շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ» դասում: Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրական նպատակով պահվող, եթե դրանք ձեռք են բերվել կարճ ժամանակահատվածում վաճառելու նպատակով: Ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես առևտրական նպատակով պահվող, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք արդյունավետ հեջավորման գործիքներ են: Առևտրական նպատակներով պահվող ֆինանսական ակտիվներից եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

Խումբն իր սովորական գործունեության ընթացքում արտարժույթի փոխանակման և կապիտալի շուկաներում կնքում է ածանցյալ ֆինանսական գործիքների՝ ներառյալ ֆյուչերսների, ֆորվարդների, սվոպների և օպցիոնների զանազան պայմանագրեր: Այդպիսի ֆինանսական գործիքները պահվում են առևտրական նպատակներով և հաշվառվում են իրական արժեքով: Իրական արժեքները գնահատվում են գնանշված շուկայական գների կամ գնային մոդելների հիման վրա, որոնք հաշվի են առնում հիմքում ընկած գործիքի ընթացիկ շուկայական և պայմանագրային գները կամ՝ այլ գործոններ: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ակտիվներ, երբ իրական արժեքը դրական է և որպես պարտավորություններ՝ երբ այն բացասական է: Տվյալ գործիքներից առաջացող օգուտներն ու վնասները ներառվում են շահույթում կամ վնասում որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ կամ արտարժույթի փոխարժեքի փոփոխություններից զուտ օգուտ/(վնաս)՝ կախված գործիքի բնույթից:

Այլ ֆինանսական գործիքներում պարունակվող ածանցյալ գործիքները դիտարկվում են որպես առանձին ածանցյալ գործիքներ և հաշվառվում են իրական արժեքով՝ եթե դրանց տնտեսական բնութագրերը և ռիսկերը ուղիղ կապված չեն դրանց հիմնական պայմանագրերին և հիմնական պայմանագիրը չի պահվում առևտրական նպատակով կամ նշանակված չի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Հիմնական պայմանագրերից առանձնացված պարունակվող ածանցյալ գործիքները հաշվառվում են առևտրական պայուսակում իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ճանաչելով շահույթում կամ վնասում:

*Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ*

Հաստատուն կամ սահմանված վճարումներով և հաստատուն մարման ժամկետով ոչ ածանցյալ ակտիվները, որոնք Խումբը հստակ մտադրված է և ի վիճակի է պահել մինչև մարման ժամկետի լրանալը դասակարգվում են որպես մինչև մարման ժամկետը պահվող: Ներդրումները, որոնք Խումբը մտադրված է պահել անորոշ ժամկետով, չեն ներառվում տվյալ դասում: Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվների հետագա չափումը կատարվում է ամորտի-

գացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու վնասները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում, երբ ակտիվներն արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

*Փոխառություններ և դեբիտորական պարտքեր*

Փոխառությունները և դեբիտորական պարտքերը հաստատուն կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում: Դրանք նախատեսված չեն անհապաղ կամ մոտ ապագայում վաճառքի համար և չեն դասակարգվում որպես առևտրական նպատակով պահվող կամ վաճառքի համար մատչելի ներդրումային արժեթղթեր: Այդպիսի ակտիվները ներառում են բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում միջոցները, միջոցները ԱՄՀ-ում, վարկերը և հակադարձ հետգնման պայմանագրերը: Այդպիսի ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Օգուտներն ու վնասները ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում ճանաչվում են, երբ փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ապաճանաչվում կամ արժեզրկվում են, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում:

*Վաճառքի համար մատչելի ակտիվներ*

Վաճառքի համար մատչելի ակտիվները ոչ ածանցյալ գործիք հանդիսացող ֆինանսական ակտիվներ են, որոնք Խմբի կողմից նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի, կամ որոնք դասակարգված չեն որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ ֆինանսական ակտիվներ՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող: Սկզբնական ճանաչումից հետո վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով, ընդ որում՝ օգուտներն ու վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում մինչև ներդրումների օտարումը կամ արժեզրկումը, որի ընթացքում նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներառված կուտակված շահույթը կամ վնասը վերադասակարգվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Տոկոսները, որոնք հաշվարկվել էին արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով, ճանաչվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

*Ֆինանսական ակտիվների վերադասակարգում*

Եթե ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես առևտրի համար պահվող ֆինանսական ակտիվ, սակայն մոտ ժամանակաշրջանում վաճառելու մտադրություն չկա, ապա այն կարող է վերադասակարգվել իրական արժեքով՝ շահույթ կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներից հետևյալ դեպքերից մեկում՝

- այն ֆինանսական ակտիվը, որը համապատասխանում է վերոնշյալ փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը, կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի դրանք պահել մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը,
- այլ ֆինանսական ակտիվները կարող են վերադասակարգվել որպես վաճառքի համար մատչելի կամ մինչև մարումը պահվող ֆինանսական ակտիվներ հազվադեպ հանգամանքներում:

Վաճառքի համար մատչելի դասակարգված ֆինանսական ակտիվը փոխառությունների և դեբիտորական պարտքերի սահմանմանը համապատասխանելու դեպքում կարող է վերադասակարգվել որպես փոխառություններ և դեբիտորական պարտքեր, եթե Խումբը նպատակ և հնարավորություն ունի պահել դրանք մինչև տեսանելի ապագա կամ մինչև մարումը:

Ֆինանսական ակտիվները վերադասակարգվում են իրենց իրական արժեքով վերադասակարգման ամսաթվի դրությամբ: Ցանկացած շահույթ կամ վնաս, որը ճանաչվել է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, չի հակադարձվում: Վերադասակարգման ամսաթվով ճանաչված ֆինանսական ակտիվի իրական արժեքը դառնում է նրա նոր ինքնարժեք կամ ամորտիզացված արժեք:

*Ներգրավված փոխառու միջոցներ*

Թողարկված ֆինանսական գործիքները կամ դրանց բաղկացուցիչները դասակարգվում են որպես պարտավորություններ, եթե պայմանագրային համաձայնության արդյունքում Խումբն ունի պարտավորություն փոխանցել դրամական միջոցներ կամ այլ ֆինանսական ակտիվներ, կամ այլ կերպ կատարելու պարտավորությունները, բացի դրամական միջոցների՝ հաստատուն գումարով կամ այլ ֆինանսական ակտիվներով սեփական բաժնային գործիքների հաստատուն քանակով փոխարինելը: Նման գործիքները ներառում են ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդները, պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ, պարտավորությունները ԱՄՀ-ի հանդեպ, թողարկված պարտատոմսեր: Սկզբնական ճանաչումից հետո փոխառված միջոցները հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Պարտավորության ապաճանաչման դեպքում, ինչպես նաև ամորտիզացիայի ընթացքում, եկամուտներն ու ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում:

*Իրական արժեքի որոշում*

- Ակտիվ շուկայում վաճառվող ֆինանսական գործիքի իրական արժեքը հաշվետու ամսաթվի դրությամբ հիմնված է դրանց շուկայական գնանշումների կամ դիլերների կողմից կատարված գնանշումների վրա (վաճառքի գին երկար դիրքի և գնման գին կարճ դիրքի համար)՝ առանց նվազեցնելու գործարքի ծախսումները:

- Ակտիվ շուկայում չգնանշվող բոլոր այլ ֆինանսական գործիքների համար իրական արժեքը որոշվում է համապատասխան գնահատման մեթոդների միջոցով:
- Գնահատման մեթոդները ներառում են զուտ ներկա արժեքի մեթոդը, դիտարկելի շուկայական տվյալներ ունեցող նմանատիպ գործիքների համեմատումը, օպցիոնների գների որոշման մեթոդը և այլ համապատասխան մեթոդներ:

### 3.6. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչում

Ֆինանսական ակտիվը (կամ ֆինանսական ակտիվի մասը, կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի մասը) ապաճանաչվում է, երբ՝

- ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքի ժամկետն ավարտվում է,
- Խումբը փոխանցում է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը, կամ պահպանում է այդ իրավունքը, բայց պարտավորվում է ստացված գումարներն ամբողջությամբ և առանց էական ուշացման փոխանցել երրորդ կողմին՝ փոխանցման համաձայնագրի համաձայն, ինչպես նաև,
- Խումբը կամ (ա) փոխանցել է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, կամ (բ) ոչ փոխանցել և ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, սակայն փոխանցել է ակտիվի նկատմամբ վերահսկողության իրավունքը:

Այն դեպքում, երբ Խումբը փոխանցել է ակտիվից դրամական հոսքեր ստանալու պահանջի իրավունքը և ոչ փոխանցել ու ոչ էլ պահպանում է ակտիվի գծով բոլոր ռիսկերի և օգուտների զգալի մասը, և չի փոխանցել ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ակտիվը հաշվառվում է որպես ֆինանսական ակտիվ: Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի երաշխիքային ապահովման ձև, այդպիսի մասնակցությունը չափվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնով՝ ակտիվի սկզբնական հաշվեկշռային արժեք և Խմբից պահանջվող փոխհատուցման առավելագույն գումար:

Երբ շարունակվող մասնակցությունը ձեռք է բերում փոխանցվող ակտիվի գծով թողարկված/կամ գնված օպցիոնի ձև (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), Խմբի մասնակցության չափը որոշվում է այն գումարի չափով, որով Խումբը կարող է հետ գնել փոխանցված ակտիվը՝ բացառությամբ իրական արժեքով գնահատված թողարկված վաճառքի օպցիոնի (ներառյալ՝ դրամական միջոցներով մարվող օպցիոններ կամ նմանատիպ պահուստներ), երբ շարունակվող մասնակցության չափը համարվում է հետևյալ երկու մեծություններից նվազագույնը՝ փոխանցված ակտիվի իրական արժեք և օպցիոնի իրագործման գին:

Ֆինանսական պարտավորությունը ապաճանաչվում է, երբ մարվում է կամ դադարում:

Փոխառուի և փոխատուի միջև պարտքային գործիքների փոխանակումը, որոնց պայմաններն էականորեն տարբերվում են միմյանցից, կամ եթե կատարվում է գործող պարտքային գործիքի պայմանների էական փոփոխություն, իրենից ներկայացնում է հին պարտքի մարում, որը պետք է հանգեցնի այդ պարտքի ապաճանաչմանը և նոր պարտքային գործիքի ճանաչմանը, իսկ տարբերությունը համապատասխան հաշվեկշռային արժեքի հետ միասին ձևակերպվում է շահույթում կամ վնասում:

### 3.7. Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում՝ արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Այն, որպես կանոն, չի տարածվում հաշվանցման գլխավոր համաձայնությունների վրա, որի դեպքում համապատասխան ակտիվներն ու պարտավորությունները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են համախառն արժեքով:

### 3.8. Հետգնման և հակադարձ հետգնման պայմանագրեր

Վաճառքի և հետգնման պայմանագրերով («ռեպո») վաճառված արժեթղթերը հաշվառվում են որպես գրավով ապահովված ֆինանսավորման գործարքներ: Արժեթղթերն արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում և այն դեպքում, երբ գնորդն ունի նշված արժեթղթերի վաճառքի կամ գրավադրման պայմանագրային իրավունք կամ համաձայնություն, դրանք վերադասակարգվում են որպես «Հետգնման պայմանագրերով գրավադրված արժեթղթեր», իսկ պայմանագրային կողմի պարտավորությունը՝ ֆինանսական և այլ հաստատությունների նկատմամբ պարտավորությունների կազմում: Վաճառքի և հետգնման գների տարբերությունը դիտվում է որպես տոկոսային ծախս և ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում հետգնման պայմանագրի գործողության ընթացքում՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

### 3.9. Որպես գրավ տրված և ստացված արժեթղթեր

Արժեթղթերը, որոնք փոխառության են տրվել գնորդներին, շարունակվում են հաշվառվել համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Փոխառությամբ ներգրավված արժեթղթերն արտացոլվում են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն երրորդ անձանց վաճառքի դեպքում: Այս դեպքում առքուվաճառքի գործարքները հաշվառվում են համա-

խմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ եկամուտների կազմում՝ հանած առևտրային արժեթղթերի հետ կապված գործառնությունների ծախսերը: Այդպիսի արժեթղթերի վերադարձի պարտավորությունը արտացոլվում է առևտրային գործառնությունների գծով պարտավորություններում՝ իրական արժեքով:

### 3.10. Շրջանառության մեջ գտնվող թղթադրամներ և մետաղադրամներ

Բանկի կողմից թողարկված շրջանառության մեջ գտնվող թղթադրամները և մետաղադրամները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում արտացոլվում են անվանական արժեքով՝ որպես պարտավորություն դրանց տիրապետողների հանդեպ: Թղթադրամների տպագրման և մետաղադրամների հատման ծախսերը ճանաչվում են որպես ծախս ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում այն տարում, որի ընթացքում կատարվել են:

### 3.11. Դրամագիտական արժեքներ

Դրամագիտական արժեքները չափվում են ինքնարժեքի և իրացման զուտ արժեքի նվազագույնով: Մետաղադրամների ինքնարժեքը որոշվում է «առաջին մուտք, առաջին ելք» սկզբունքով և ներառում է մետաղադրամների ձեռքբերման ծախսումները և նրանց ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի գնահատված գինն է՝ հանած վաճառքը կազմակերպելու համար գնահատված ծախսումները: Վաճառքի ժամանակ գնահատված զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերությունը ճանաչվում է որպես շահույթ կամ վնաս ընթացիկ տարվա ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում:

### 3.12. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Այդ գումարը ներառում է սարքավորման փոխարինման ժամանակ կատարված ծախսերը, եթե դրանք բավարարում են ճանաչման չափանիշներին: Նմանապես, խոշոր կապիտալ ներդրումներ կատարելիս, ծախսը ներառվում է հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի մեջ որպես փոխարինում, եթե ճանաչման չափանիշները բավարարված են:

Երբ հիմնական միջոցի նշանակալի մասերը անհրաժեշտ է պարբերաբար փոխարինել, Խումբը ճանաչում է նման մասերը որպես առանձին ակտիվներ իրենց հատուկ օգտակար ծառայության ժամկետներով և համապատասխանաբար հաշվարկում է մաշվածություն:

Հիմնական միջոցների վերանորոգման և պահպանման հետ կապված բոլոր ծախսումները ֆինանսական արդյունքի մասին հա-

մախմբված հաշվետվությունում ճանաչվում են որպես ծախս՝ դրանց կատարման պահին:

Սկզբնապես ճանաչված հիմնական միջոցի միավոր և ցանկացած էական մաս ապաճանաչվում է օտարման դեպքում և երբ ակտիվի օգտագործումից կամ օտարումից ոչ մի տնտեսական օգուտ չի ակնկալվում: Ակտիվի ապաճանաչումից առաջացող ցանկացած օգուտ կամ վնաս (հաշվարկված որպես օտարումից զուտ մուտքերի/հատույցների և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերություն) ներառվում է շահույթում կամ վնասում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

*Մաշվածություն*

Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ճանաչման պահից: Մաշվածությունը հաշվարկվում է՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների հետևյալ օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Հող և շենքեր | 30-50 տարի | 30-50 տարի |
| Ցանցեր, համակարգչային և այլ սարքավորումներ | 2-15 տարի | 2-15 տարի |
| Փոխադրամիջոցներ | 5 տարի | 5 տարի |

Ակտիվի մնացորդային արժեքները, օգտակար ծառայության ժամկետները և մեթոդները վերանայվում և, եթե անհրաժեշտ է, փոփոխվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

### 3.13. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները ներառում են համակարգչային ծրագրերն ու լիցենզիաները:

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները սկզբնապես ճանաչվում են ձեռքբերման արժեքով: Ձեռնարկատիրական միավորման արդյունքում ձեռքբերված ոչ նյութական ակտիվների արժեքը ձեռքբերման ամսաթվի դրությամբ դրանց իրական արժեքն է: Սկզբնական ճանաչումից հետո ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կուտակված վնասները: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները կարող են լինել որոշակի կամ անորոշ: Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են գծային մեթոդով օգտակար ծառայության ընթացքում, որը կազմում է 1-7 տարի և գնահատվում են արժեզրկման տեսանկյունից, երբ առկա են արժեզրկման հայտանիշեր: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվների ամորտիզացիայի հաշվարկման մեթոդները և ժամկետները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ:

Համակարգչային ծրագրերի ընթացիկ սպասարկման ծախսերը ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում դրանց կատարման ժամանակ:

### 3.14. Գործառնական վարձակալության գծով պարտավորվածություններ՝ Խումբը որպես վարձատու

Խումբը համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացնում է գործառնական վարձակալության առարկա հանդիսացող ակտիվը՝ ըստ ակտիվի բնույթի: Գործառնական վարձակալությունից ստացվող վարձակալական եկամուտը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում որպես այլ եկամուտ:

### 3.15. Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Խումբը իրականացնում է ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի՝ արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի գնահատում: Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբը համարվում են արժեզրկված միայն և միայն այն դեպքում, եթե կա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, որպես ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձությունների («ծախսային իրադարձություն») արդյունք, և երբ այդ իրադարձությունը կամ իրադարձություններն ազդեցություն ունեն ֆինանսական ակտիվից կամ ակտիվների խմբից ակնկալվող ապագա դրամական հոսքերի վրա, որոնք կարելի է արժանահավատորեն չափել: Արժեզրկումից առաջացած վնասի օբյեկտիվ հայտանիշը կարող է ներառել վարկառուի կամ վարկառուների խմբի զգալի ֆինանսական դժվարությունները, տոկոսագումարների և մայր գումարների վճարման պարտավորությունների խախտումների առկայությունը, այն հավանականությունը, որ տեղի կունենա սնանկացում կամ այլ ֆինանսական վերակազմակերպում, ինչպես նաև դիտարկվող շուկաներից տեղեկատվություն ակնկալվող ապագա դրամական հոսքերի չափերի նվազման վերաբերյալ, օրինակ՝ ժամկետանց վճարումների մակարդակի փոփոխություն կամ տնտեսական պայմանների փոփոխություն, որոնք կապված են ակտիվների արժեզրկման հետ:

#### *Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ, վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր*

Ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված այն միջոցների համար, որոնց հաշվառումն իրականացվում է ամորտիզացված արժեքով, Խումբն ի սկզբանե գնահատում է արժեզրկված լինելու հայտանիշները անհատապես՝ էական ակտիվների համար, կամ խմբային՝ բոլոր ֆինանսական ակտիվների համար, որոնք անհատապես էական չեն համարվում: Եթե Խումբը որոշում է, որ անհատապես գնահատված ֆինանսական ակտիվի համար չկա արժեզրկման օբյեկտիվ հայտանիշ, անկախ այն հանգամանքից, էական է այն, թե ոչ, ապա այդ ակտիվը ներառում է համանման վարկային ռիսկերի բնութագրեր ունեցող ֆինանսական ակտիվների խմբում և գնահատում է դրանց արժեզրկված լինելը խմբային հիմունքով: Ակտիվները, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է անհատական

հիմունքով և որոնց նկատմամբ ճանաչվում են արժեզրկումից վնասներ, չպետք է գնահատվեն խմբային հիմունքով:

Արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի առկայության դեպքում արժեզրկումից վնասը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի (բացառությամբ վարկի հետ կապված դեռևս չկրած ապագա ծախսերի) ներկա արժեքի տարբերությունը: Ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկման պահուստի միջոցով, իսկ արժեզրկումից ծախսն արտացոլվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Տոկոսային եկամուտը շարունակում է հաշվեգրվել նվազեցված հաշվեկշռային արժեքով՝ ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Վարկերը, համապատասխան պահուստների հետ միասին, դուրս են գրվում, եթե ապագայում չկա վարկը հավաքագրելու իրատեսական հեռանկար, և երբ բոլոր գրավներն օգտագործվել են կամ փոխանցվել Խմբին: Եթե հաջորդող տարվա ընթացքում գնահատված արժեզրկման ծախսն ավելանում կամ նվազում է արժեզրկման ճանաչումից հետո կատարված իրադարձությունների պատճառով, նախկինում ճանաչված արժեզրկման ծախսն ավելացվում կամ նվազեցվում է՝ ճշգրտելով պահուստի գումարը: Եթե ապագա դուրսգրումը հետագայում վերականգնվում է, ապա վերականգնված գումարը կրեդիտագրվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Հնարավոր ապագա դրամական հոսքերի բերված արժեքը զեղչվում է ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով: Եթե վարկը տրամադրված է լողացող տոկոսադրույքով, ապա արժեզրկումից վնասների չափման նպատակով զեղչման դրույքաչափը կլինի ընթացիկ արդյունավետ տոկոսադրույքը: Գրավով ապահովված ֆինանսական ակտիվների ապագա հոսքերի ներկա արժեքի հաշվարկը հիմնվում է այն դրամական հոսքերի վրա, որոնք կարող են ստացվել գրավի իրացումից, նվազեցված գրավի բռնագանձման և օտարման ծախսումներով՝ անկախ բռնագանձման հավանականությունից:

Արժեզրկման խմբային գնահատման նպատակով ֆինանսական ակտիվները խմբավորվում են Խմբի ներքին վարկային դասակարգման հիման վրա, որը հաշվի է առնում պարտքային ռիսկի այնպիսի բնութագրիչներ, ինչպիսիք են ակտիվի տեսակը, ոլորտը, աշխարհագրական դիրքը, գրավի տեսակը, ժամկետայնության կարգավիճակը և այլ կապակցված գործոններ:

Ֆինանսական ակտիվների խմբի գծով ապագա դրամական հոսքերը, որոնց արժեզրկված լինելը գնահատվում է խմբային հիմքով, որոշվում են ակտիվների գծով կրած վնասների պատմական վիճակագրության հիման վրա, որի գծով պարտքային ռիսկի բնութագրիչները համարժեք են համանման ակտիվների խմբի բնութագրիչներին: Պատմական վիճակագրական շարքերը ճշգրտվում են ընթացիկ շուկայական իրավիճակը արտացոլելու համար՝ չեզոքացնելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում ընկած այն շուկայական պայմանների ազդեցությունը, որոնք տվյալ ժամանակաշրջանում գոյություն չունեն, և արտացոլելու պատմական վիճակագրական շարքերի հիմքում չընդգրկված շուկայական նոր պայմանները: Ապագա դրամական հոսքերում գնահատման փոփոխություն-

ները արտացոլում և համապատասխանում են դիտարկվող շրջաններում յուրաքանչյուր տարվա տեղեկատվության փոփոխությանը (օրինակ, գործազրկության մակարդակի փոփոխություն, անշարժ գույքի գներ, ապրանքների գներ, վճարունակության կարգավիճակ կամ այլ գործոններ, որոնք վկայում են խմբի կրած վնասների և դրանց չափի մասին): Ապագա դրամական հոսքերի գնահատման համար օգտագործվող մեթոդաբանությունը և վարկածները պարբերաբար վերանայվում են Խմբի կողմից՝ վնասների իրական և գնահատված արժեքների միջև տարբերությունները նվազեցնելու նպատակով:

*Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ*

Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվները Խումբը գնահատում է անհատականորեն, եթե առկա են արժեզրկման հայտանիշեր: Եթե արժեզրկման հետևանքով վնասի առկայության օբյեկտիվ հայտանիշեր կան, վնասի արժեքը հաշվարկվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և հետագայում ակնկալվող դրամական հոսքերի ներկա բերված արժեքի տարբերություն: Ակտիվի հաշվեկշռային արժեքը պակասեցվում է, և վնասը ճանաչվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Եթե որևէ տարվա ընթացքում արժեզրկումից ակնկալվող վնասի գումարը նվազում է արժեզրկումը ճանաչելուց հետո տեղի ունեցած իրադարձությունների հետևանքով, նախապես հաշվառված գումարները կրեդիտագրվում են համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

*Վաճառքի համար մատչելի ակտիվներ*

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է վաճառքի համար մատչելի ակտիվների կամ ներդրումների խմբի արժեզրկված լինելու օբյեկտիվ հայտանիշերի առկայությունը:

Վաճառքի համար մատչելի դասակարգված պարտքային գործիքների արժեզրկման օբյեկտիվ հայտանիշերի առկայության գնահատումը իրականացվում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների նման: Ապագա տոկոսային եկամուտը հաշվեգրվում է նվազեցված հաշվեկշռային արժեքների հիման վրա՝ օգտագործելով այն դրույքաչափը, որն արժեզրկման վնասներն արտացոլելու նպատակով կիրառվել է ապագա դրամական հոսքերի զեղչման ժամանակ: Տոկոսային եկամուտը արտացոլվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Եթե հաջորդող տարվա ընթացքում պարտքային գործիքի իրական արժեքն աճում է այնպիսի իրադարձությունների պատճառով, որոնք տեղի են ունեցել արժեզրկման գծով վնասները համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչվելուց հետո, ապա նախկինում արժեզրկման գծով ծախսը հակադարձվում է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության միջոցով:

*Ոչ ֆինանսական ակտիվներ*

Խումբը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատում է, արդյոք, առկա է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է

արժեզրկված համարվել: Եթե առկա է այդպիսի հայտանիշ կամ երբ անհրաժեշտ է իրականացնել ակտիվի տարեկան արժեզրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի փոխհատուցվող գումարը: Ակտիվի փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից՝ հանած վաճառքի համար անհրաժեշտ ծախսումները, և օգտագործման արժեքից առավելագույնն է, և որոշվում է առանձին ակտիվի համար,բացառությամբ այն դեպքերի, երբ ակտիվը չի առաջացնում դրամական միջոցների ներհոսքեր, որոնք մեծապես անկախ են այլ ակտիվներից կամ ակտիվների խմբերից առաջացող դրամական միջոցների ներհոսքերից: Այն դեպքում, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինիս փոխհատուցվող գումարը, ակտիվը համարվում է արժեզրկված և արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքի գնահատման ժամանակ դրամական միջոցների գնահատված հոսքերը զեղչվում են ներկա արժեքի՝ օգտագործելով զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և տվյալ ակտիվին հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները՝ առանց հաշվի առնելու հարկային ազդեցությունը:

Ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և հակադարձվում են միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

### 3.16. Կենսաթոշակներ

Խմբում, աշխատակիցների աշխատավարձի հիման վրա հաշվարկված որոշակի տոկոսը Հայաստանի Հանրապետության պետական կենսաթոշակային համակարգին փոխանցելուց բացի, այլ հատուկ կենսաթոշակային հիմնադրամ չի ձևավորվում: Նշված հիմնադրամին հատկացումների հետ կապված ծախսերը արտացոլվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն ժամանակաշրջանում, որին դրանք վերաբերվում են:

### 3.17. Պահուստներ

Պահուստը ճանաչվում է, երբ Խումբն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք:

### 3.18. Հարկում

Բանկն ազատված է բոլոր հարկերից և տուրքերից, բացառությամբ ապրանքների ներմուծման համար մաքսային սահմանին

վճարման ենթակա հարկերից, մաքսատուրքերից և մաքսավճարներից: Միաժամանակ Բանկը հանդես է գալիս որպես հարկային գործակալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: Բանկի դուստր կազմակերպությունները Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հաշվարկում են շահութահարկ և այլ հարկեր և տուրքեր:

### 3.19. Կանոնադրական կապիտալ

Սովորական բաժնետոմսերը արտացոլվում են սեփական կապիտալի կազմում:

*Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից թողարկված մուրհակ*

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 11.4 հոդվածի համաձայն նախորդ ֆինանսական տարվա արդյունքում Բանկի սեփական կապիտալի պահուստների հանրագումարը գերազանցող գումարի չափով առաջացած վնասը ծածկելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից թողարկված մուրհակը ճանաչվել է որպես լրացուցիչ կապիտալ:

### 3.20. Պայմանական ակտիվներ և պարտավորություններ

Պայմանական պարտավորությունները չեն արտացոլվում համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, այլ բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում, բացառությամբ այն դեպքերի, երբ պարտավորության մարման հետ կապված ռեսուրսների արտահոսքը համարվում է քիչ հավանական: Պայմանական ակտիվները չեն արտացոլվում ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, ընդ որում՝ դրանք բացահայտվում են հաշվետվություններին կից ծանոթագրություններում այն դեպքերում, երբ դրանց հետ կապված տնտեսական օգուտների ներհոսքը համարվում է հավանական:

### 3.21. Տոկոսային եկամուտներ և ծախսեր

Բոլոր այն ֆինանսական գործիքների համար, որոնք հաշվառվում են ամորտիզացված արժեքով, և բոլոր տոկոսային եկամուտ բերող ֆինանսական գործիքների համար, որոնք դասակարգված են որպես վաճառքի համար մատչելի, տոկոսային եկամուտն ու ծախսը հաշվառվում է արդյունավետ տոկոսադրույքով, որի զեղչման միջոցով ակնկալվող ապագա դրամական վճարումները կամ ներհոսքերը ֆինանսական գործիքի ենթադրվող ողջ օգտագործման ժամանակահատվածում կամ ավելի կարճ ժամանակահատվածում, որտեղ այն կիրառելի է, ճշգրտորեն բերվում են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության զուտ հաշվեկշռային արժեքին:

Հաշվարկի ժամանակ հաշվի են առնվում ֆինանսական գործիքի գծով բոլոր պայմանագրային պայմանները (օրինակ՝ ժամկետից շուտ մարման իրավունքը) և կոմիսիոն կամ լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն կապված են գործիքի հետ և որոնք արդյու-

նավետ տոկոսադրույքի բաղկացուցիչ մաս են կազմում, սակայն հաշվի չեն առնվում ապագա վնասները: Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքները ճշգրտվում են Խմբի կողմից վճարումների կամ մուտքերի գնահատման վերանայման դեպքում: Ճշգրտված հաշվեկշռային արժեքը հաշվարկվում է սկզբնական արդյունավետ տոկոսադրույքի հիման վրա, իսկ հաշվեկշռային արժեքի փոփոխությունը դիտվում է որպես տոկոսային եկամուտ կամ ծախս:

Երբ ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ֆինանսական ակտիվների խմբի ճանաչված արժեքը նվազել է արժեզրկման կորուստների արդյունքում, տոկոսային եկամուտը շարունակում է ճանաչվել, օգտագործելով սկզբնական արդյունավետ տոկոսադրույքը՝ կիրառելով նոր հաշվեկշռային արժեքը:

### 3.22. Կոմիսիոն եկամուտ

Տվյալ ժամանակաշրջանում ծառայությունների մատուցման արդյունքում վաստակված կոմիսիոն վճարները հաշվեգրվում են այդ ժամանակահատվածի ընթացքում:

### 3.23. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունները ապագայում

*Ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնք հրապարակվել են, բայց դեռ ուժի մեջ չեն մտել*

***ՖՀՄՍ 9*** *«Ֆինանսական գործիքներ (մաս առաջին)»*

2009 և 2010թթ. նոյեմբերին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ» ստանդարտի առաջին մասը: Սույն ստանդարտը վերջնականապես կփոխարինի ՀՀՄՍ 39-ը՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում»: ՖՀՄՍ 9 ստանդարտը ուժի մեջ է մտնում այն հաշվետու ժամանակաշրջանների համար, որոնք սկսվում են 2015թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո: ՖՀՄՍ 9 ստանդարտի առաջին մասը ներկայացնում է ֆինանսական գործիքների դասակարգման և չափման նոր պահանջներ: Մասնավորապես, հետագա չափման նպատակով բոլոր ֆինանսական ակտիվները պետք է դասակարգվեն որպես ամորտիզացված արժեքով կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, ընդ որում հնարավոր է չեղյալ չհամարվող ընտրություն արտացոլելու առևտրի համար չնախատեսված բաժնային գործիքների վերագնահատումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունների համար պարտքային ռիսկով պայմանավորված փոփոխությանը վերագրելի իրական արժեքի փոփոխությունը ներկայացվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում: Խումբն արդեն գնահատում է նոր ստանդարտի կիրառման ազդեցությունը և որոշում է սկզբնական կիրառման ամսաթիվը:

***ՖՀՄՍ 10*** *«Համախմբված ֆինանսական հաշվետվություններ»*

ՖՀՄՍ 10 «Համախմբված ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտը սահմանում է միասնական վերահսկողության մոդել,

որը կիրառվում է բոլոր կազմակերպությունների նկատմամբ՝ ներառյալ հատուկ նշանակության կազմակերպությունները: ՖՀՄՍ 10-ով ներկայացված փոփոխությունները կպահանջեն ղեկավարությունից կիրառել նշանակալի դատողություններ, որպեսզի որոշեն, թե որ կազմակերպություններն են վերահսկվող և, այդ իսկ պատճառով, պետք է համախմբվեն մայր կազմակերպության հետ՝ ի տարբերություն ՀՀՄՍ 27-ով սահմանված պահանջների հետ: Բացի այդ, ՖՀՄՍ 10-ը նախատեսում է գործակալական հարաբերությունների պայմաններում ստանդարտի կիրառման հատուկ ցուցումներ: ՖՀՄՍ 10-ը փոխարինում է ՀՀՄՍ 27 «Համախմբված և առանձին ֆինանսական հաշվետվություններ» ստանդարտի այն մասը, որը վերաբերում է համախմբված ֆինանսական հաշվետվությունների հաշվառմանը: Այն նաև ներառում է ՄՄԿ «Համախմբում. հատուկ նշանակության կազմակերպություններ» 12-ում ներառված խնդիրները: Ստանդարտն ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ից կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը ընդունելի է: Ներկայումս Խումբը գնահատում է ՖՀՄՍ 10-ի կիրառման հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

***ՖՀՄՍ 11** «Համատեղ գործունեության համաձայնություններ»*

ՖՀՄՍ 11-ը բացառում է համատեղ վերահսկվող կազմակերպությունները համամասնական մեթոդով համախմբելու տարբերակը: Դրա փոխարեն համատեղ վերահսկման սահմանմանը բավարարող համատեղ վերահսկվող կազմակերպությունները պետք է հաշվառվեն բաժնեմասնակցության մեթոդով: ՖՀՄՍ 11-ը փոխարինում է ՀՀՄՍ 31 «Մասնակցություն համատեղ ձեռնարկումներում» ստանդարտը և ՄՄԿ 13 «Համատեղ վերահսկվող կազմակերպություններ՝ ձեռնարկողների ոչ դրամական ներդրումներ» մեկնաբանությունը և ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը թույլատրելի է: Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 11-ի կիրառման հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

***ՖՀՄՍ 12** «Այլ կազմակերպություններում բաժնեմասնակցության գծով բացահայտումներ»*

ՖՀՄՍ 12-ը ներառում է ՀՀՄՍ 27-ի բոլոր բացահայտումները կապված ֆինանսական հաշվետվությունների համախմբման հետ, ինչպես նաև ՀՀՄՍ 31-ով և ՀՀՄՍ 28-ով նախկինում նախատեսված բացահայտումները: Այս բացահայտումները վերաբերում են կազմակերպության բաժնեմասին դուստր կազմակերպություններում, համատեղ ձեռնարկումներում, ասոցիացված կազմակերպություններում և կառուցվածքային կազմակերպություններում: Այդպիսի կազմակերպությունների գծով պահանջվում են նաև մի շարք նոր բացահայտումներ: Ստանդարտը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը ընդունելի է: Ստանդարտի կիրառումը կպահանջի Խմբի ֆինանսական հաշվետվություններում նոր բացահայտումներ, սակայն ազդեցություն չի ունենա ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

***ՖՀՄՍ 13** «Իրական արժեքի չափում»*

ՖՀՄՍ 13-ը սահմանում է ՖՀՄՍ-ի շրջանակներում բոլոր իրական արժեքների չափման մեկ միասնական ուղեցույց: ՖՀՄՍ 13-ը չի փոփոխում, թե կազմակերպություններից երբ է պահանջվում կիրառել իրական արժեք, այլ տալիս է ուղեցույց, թե ինչպես չափել իրական արժեքը ՖՀՄՍ-ի շրջանակներում, երբ իրական արժեքի կիրառումը պարտադիր է կամ թույլատրելի: Ստանդարտը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Ավելի վաղ կիրառումը ընդունելի է: Ստանդարտի կիրառումը կարող է ազդեցություն ունենալ Խմբի իրական արժեքով հաշվառվող ակտիվների և պարտավորությունների վրա: Խումբը ներկայումս գնահատում է ՖՀՄՍ 13-ի կիրառման հնարավոր ազդեցությունը իր ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

***ՀՀՄՍ 27** «Առանձին ֆինանսական հաշվետվություններ» (փոփոխված 2011թ.)*

Նոր ՖՀՄՍ 10-ի և ՖՀՄՍ 12-ի հետևանքով ՀՀՄՍ 27-ի շրջանակները սահմանափակվում են դուստր կազմակերպությունների, համատեղ վերահսկվող կազմակերպությունների և ասոցիացված կազմակերպությունների առանձին ֆինանսական հաշվետվություններում հաշվառմամբ: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

***ՀՀՄՍ 28** «Ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում ներդրումներ» (փոփոխված 2011թ.)*

Նոր ՖՀՄՍ 11-ի և ՖՀՄՍ 12-ի հետևանքով ՀՀՄՍ 28-ը անվանափոխվել է և դարձել՝ ՀՀՄՍ 28 «Ներդրումներ ասոցիացված կազմակերպություններում և համատեղ ձեռնարկումներում»: Ստանդարտի նոր հրատարակությունում նկարագրվում է համատեղ ձեռնարկումներում և ասոցիացված կազմակերպություններում ներդրումների նկատմամբ բաժնեմասնակցության մեթոդի կիրառությունը: Փոփոխությունը ուժի մեջ է մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար:

***ՖՀՄՍ 7** «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ստանդարտում փոփոխություններ*

Փոփոխությունները հրապարակվել են 2010թ. հոկտեմբերին և ուժի մեջ են մտնում 2011թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Փոփոխությունը պահանջում է լրացուցիչ բացահայտում այն ֆինանսական ակտիվների վերաբերյալ, որոնք փոխանցվել են, բայց չեն ապաճանաչվել, որպեսզի Խմբի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին թույլ տա հասկանալ չապաճանաչված ակտիվների և համապատասխան պարտավորությունների կապերը: Բացի այդ, փոփոխությունները պահանջում են ապաճանաչված ակտիվներում շարունակվող մասնակցության վերաբերյալ բացահայտումներ, որպեսզի ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին թույլ տա գնահատել ապաճանաչված ակտիվներում կազմակերպության շարունակվող մասնակցության բնույթը և դրանց հետ կապված ռիսկերը: Փոփոխությունը ազդում է միայն բացահայտման վրա և չունի ազդեցություն Խմբի ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

***ՀՀՄՍ 12** «Շահութահարկ» ստանդարտում լրացումներ՝ «Հետաձգված հարկ՝ հիմքում ընկած ակտիվների վերականգնում»*

2010թ. դեկտեմբերին ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՀՀՄՍ 12-ի փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտնում 2012թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Փոփոխությունը պարզաբանում է իրական արժեքով չափվող ներդրումային գույքի գծով հետաձգված հարկի սահմանումը: Փոփոխությունը ներկայացնում է հերքված վարկած այն մասին, որ ՀՀՄՍ 40-ի համաձայն իրական արժեքով չափվող ներդրումային գույքի գծով հետաձգված հարկը պետք է չափվի ելնելով հաշվեկշռային արժեքը վաճառքի միջոցով վերականգնելու փաստից: Ավելին, լրացումը ներկայացնում է պահանջ այն մասին, որ վերագնահատված արժեքով չափվող չմաշեցվող ակտիվի գծով հետաձգված հարկը ՀՀՄՍ 16-ով միշտ չափում է ակտիվի վաճառքի հիման վրա: Խումբը այժմ գնահատում է այս լրացումների կիրառման ազդեցությունը:

***ՀՀՄՍ 19** «Աշխատակիցների հատուցումներ»*

ՀՀՄՍԽ-ն թողարկել է ՀՀՄՍ 19 «Աշխատակիցների հատուցումներ» ստանդարտում մի շարք լրացումներ, որոնք ուժի մեջ են մտնում 2013թ. հունվարի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Լրացումը ներմուծում է էական փոփոխություններ աշխատակիցների հատուցումների հաշվապահական հաշվառման նկատմամբ, մասնավորապես բացառում է կենսաթոշակային պլանի ակտիվներում և պարտավորություններում փոփոխության հետաձգված ճանաչելու հնարավորությունը («միջանցքի մոտեցում»): Բացի այդ, լրացումը սահմանափակում է զուտ կենսաթոշակային ակտիվների (պարտավորությունների) փոփոխությունների ճանաչումը շահույթում կամ վնասում տոկոսային եկամուտը (ծախսը) և ծառայության գծով ծախսերը զտելու միջոցով: Խումբը ակնկալում է, որ այս փոփոխությունները ոչ մի ազդեցություն չեն ունենա Խմբի ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքների վրա:

***ՀՀՄՍ 1** «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտում փոփոխություններ՝ «Այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հոդվածների ներկայացում»*

ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ստանդարտի լրացումները ուժի մեջ են մտնում 2012թ. հուլիսի 1-ին կամ այդ ամսաթվից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար և փոփոխում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ներկայացվող հոդվածների խմբավորումը: Ապագայում որևէ ժամանակի դրությամբ շահույթ կամ վնաս վերադասակարգվելու հնարավորություն ունեցող հոդվածները (օրինակ՝ ապաճանաչման կամ վճարման դեպքում) կներկայացվեն առանձին այն հոդվածներից, որոնք երբեք չեն վերադասակարգվելու: Այս փոփոխությունները կանդրադառնան համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության ներկայացման վրա, բայց ազդեցություն չեն ունենա ֆինանսական վիճակի կամ արդյունքների վրա:

## 4. Տոկոսային եկամուտ

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **Տոկոսային եկամուտ արտարժույթով արտահայտված ակտիվների գծով** | | |
| Ժամկետային ավանդներ | 1,485,131 | 1,834,407 |
| Մինչև մարումը պահվող ակտիվներ | 778,609 | 138,829 |
| Նոստրո հաշիվներ | 180,383 | 248,843 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 33,309 | 60,756 |
| Այլ | 352 | - |
| | **2,477,784** | **2,282,835** |
| **Տոկոսային եկամուտ տեղական արժույթով արտահայտված ակտիվների գծով** | | |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 7,359,989 | 4,676,307 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 1,760,350 | 2,305,423 |
| Մինչև մարումը պահվող ակտիվներ | 282,082 | 270,049 |
| Այլ | 25 | - |
| | **9,402,446** | **7,251,779** |
| | **11,880,230** | **9,534,614** |

## 5. Տոկոսային ծախս

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **Տոկոսային ծախս արտարժույթով արտահայտված պարտավորությունների գծով** | | |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 3,383,675 | 2,571,362 |
| Այլ փոխառություններ | 263,492 | 204,348 |
| Այլ պարտավորություններ | 26,994 | 17,320 |
| | **3,674,161** | **2,793,030** |
| **Տոկոսային ծախս տեղական արժույթով արտահայտված պարտավորությունների գծով** | | |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 5,613,007 | 13,487,074 |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 770,412 | 313,078 |
| Թողարկված պարտատոմսեր | 8,930 | - |
| Այլ պարտավորություններ | 78,371 | 59,094 |
| | **6,470,720** | **13,859,246** |
| | **10,144,881** | **16,652,276** |

### *6. Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից*

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 *(վերահաշ-վարկված)* |
|---|---|---|
| Զուտ օգուտ/(վնաս) դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից | 19,326,197 | (12,099,588) |
| Զուտ օգուտ սփոթ գործարքներից | 593,752 | 137,125 |
| Զուտ վնաս արտարժութային ածանցյալ գործիքներից | (738,711) | (675,363) |
| | **19,181,238** | **(12,637,826)** |

Դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատումից ստացված զուտ օգուտի / (վնասի) կազմում ներառված է 21,040,517 հազար դրամ գումարով արտարժույթի վերագնահատումից զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով (2010թ.՝ 24,501,164 հազար դրամի զուտ վնաս):

## 7. Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---:|---:|
| Զուտ օգուտ հավատարմագրային կառավարման ներքո գտնվող ակտիվների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը) * | 166,294 | 236,469 |
| Զուտ օգուտ սեփական կառավարման ներքո գտնվող արտերկրյա արժեթղթերի գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը) * | 2,492,809 | 6,599,921 |
| Զուտ օգուտ/(վնաս) սեփական կառավարման ներքո գտնվող փողի շուկայի գործիքների գծով | (3,577) | 11,126 |
| Զուտ վնաս սեփական կառավարման ներքո ածանցյալ գործիքների գծով (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը) * | (525,985) | (3,772,380) |
| Հավատարմագրային կառավարման գծով վճարներ (բացառությամբ արտարժույթի վերագնահատումը) * | (132,185) | (131,961) |
| | **1,997,356** | **2,943,175** |

** Վերը նշված ֆինանսական գործիքների գծով արտարժույթի վերագնահատման արդյունքը ներառված է «Զուտ օգուտ/(վնաս) փոխարժեքային տարբերություններից» հոդվածում (տես ծան. 6):*

## 8. Այլ եկամուտ

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---:|---:|
| ՀՀ կառավարության ֆինանսական գործակալության հավելավճարկոս | 1,637,706 | 1,189,996 |
| Դրամագիտական արժեքներ | 686,002 | 434,022 |
| Վարկային ռեգիստր | 61,929 | 58,248 |
| Այլ | 418,688 | 219,387 |
| | **2,804,325** | **1,901,653** |

## 9. Թղթադրամների, դրամագիտական արժեքների թողարկման և մետաղադրամների հատման ծախսեր

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---:|---:|
| Թղթադրամների և մետաղադրամների թողարկման ծախսեր | 1,982,853 | 1,366 |
| Դրամագիտական արժեքների թողարկման ծախսեր | 400,495 | 225,436 |
| | **2,383,348** | **226,802** |

## *10. Այլ ծախսեր*

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ | 4,674,578 | 4,139,441 |
| Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցություն | 2,000,000 | 500,000 |
| Մաշվածություն և ամորտիզացիա | 1,223,482 | 731,035 |
| Անվտանգություն | 803,473 | 729,718 |
| Վերանորոգում և տեխնիկական սպասարկում | 323,924 | 569,417 |
| Մասնագիտական ծառայություններ | 183,542 | 240,330 |
| Հատկացումներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին | - | 5,000,000 |
| Այլ | 1,778,816 | 1,152,001 |
| | **10,987,815** | **13,061,942** |

## *11. Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ*

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով** | | |
| Նոստրո հաշիվներ | 140,731,605 | 119,776,198 |
| Ժամկետային ավանդներ | 105,856,548 | 37,385,870 |
| Հավատարմագրային կառավարման տակ գտնվող ակտիվներում ներառված դրամական միջոցներ | 76,449 | 89,668 |
| Հաշվեգրված տոկոսներ ավանդների և նոստրո հաշիվների գծով | 76,314 | 36,169 |
| Տոկոսադրույքի ֆյուչերսների պարտադիր մարժա | 71,710 | 814,196 |
| Այլ | 18,420 | - |
| | **246,831,046** | **158,102,101** |
| Արժեզրկման պահուստ | (10,415,782) | - |
| | **236,415,264** | **158,102,101** |
| **Արժեզրկման պահուստի շարժ** | | |
| Մնացորդը 2011թ. հունվարի 1-ին | - | - |
| Պահուստի ավելացում | (10,415,782) | - |
| **Մնացորդը 2011թ. դեկտեմբերի 31-ին** | **(10,415,782)** | **-** |

**Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցների կենտրոնացում**

2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբն ուներ տեղաբաշխված միջոցներ 3 բանկերում, որոնցից յուրաքանչյուրի մնացորդները գերազանցում էին բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված ընդհանուր միջոցների 10%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այս մնացորդների ընդհանուր գումարը կազմում է 170,902,429 հազար դրամ (2010թ.՝ 135,152,491 հազար դրամ):

Ժամկետային ավանդները ունեն մինչև 3 ամիս մարման ժամկետ 0.15%-ից 3.6% տոկոսադրույքով (2010թ.՝ 0.69%-4.5%):

## *12. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ*

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Ակտիվներ | | |
| ***Պարտքային և հաստատագրված եկամուտով այլ գործիքներ-Գնանշված*** | | |
| Արտերկրյա պարտատոմսեր | 344,720,503 | 400,925,859 |
| Փողի շուկայի գործիքներ սեփական կառավարման տակ | - | 3,645,519 |
| | **344,720,503** | **404,571,378** |
| ***Ածանցյալ ֆինանսական գործիքներ-Գնանշված*** | | |
| Պայմանագրեր արտարժույթով սեփական կառավարման տակ | - | 61,539 |
| | **344,720,503** | **404,632,917** |

Սկզբնական ճանաչման պահին պարտքային և հաստատագրված եկամուտով այլ գործիքները Խմբի կողմից նախատեսվել են որպես ֆինանսական գործիքներ, որոնց վերաչափումից օգուտները և վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող սեփական կառավարման տակ գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Պետական պարտատոմսեր | 224,738,574 | 249,225,131 |
| Պետական գործակալությունների պարտատոմսեր | 33,517,440 | 40,569,775 |
| Այլ արժեթղթեր | 41,216,144 | 68,665,899 |
| **Ընդամենը** | 299,472,158 | 358,460,805 |

Հավատարմագրային կառավարման տակ գտնվող արտերկրյա պարտատոմսերն իրենցից ներկայացնում են.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Արտերկրյա կառավարությունների պարտքային արժեթղթեր | 37,133,087 | 32,032,674 |
| Արտերկրյա ֆինանսական հաստատությունների արժեթղթեր | 8,115,258 | 10,432,380 |
| **Ընդամենը** | **45,248,345** | **42,465,054** |

Հավատարմագրային կառավարման տակ գտնվող արժեթղթերը և ածանցյալ ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են Համաշխարհային բանկի վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (IBRD) կողմից կառավարվող ակտիվներ: Հավատարմագրային կառավարման տակ գտնվող միջոցների նկատմամբ Խմբի կողմից սահմանվել են ռիսկերին ենթարկվածության սահմանաչափեր և ներդրումային ուղեցույցներ:

### *Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 (վերահաշվարկված) | 2009 | 2011 | | 2010 (վերահաշվարկված) | | 2009 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Անվանական արժեք | | | Ակտիվ | Պարտավորություն | Ակտիվ | Պարտավորություն | Ակտիվ | Պարտավորություն |
| Ապրանքային ֆյուչերսներ | 1,624,742 | 1,350,189 | - | - | 2,961 | - | 4,629 | - | - |
| Տոկոսադրույքի ֆյուչերսներ | 2,445,368 | 10,913,063 | 14,806,747 | - | 535 | - | 14,849 | - | 36,588 |
| **Ընդամենը ֆյուչերսներ հավատարմագրային կառավարման տակ** | **4,070,110** | **12,263,252** | **14,806,747** | **-** | **3,496** | **-** | **19,478** | **-** | **36,588** |
| Տոկոսադրույքի ֆյուչերսներ սեփական կառավարման տակ | 192,268,980 | 467,176,740 | 1,136,105,882 | - | - | 61,539 | - | - | - |
| Արժութային սվոփ | 7,649,301 | - | - | - | 145,161 | - | - | - | - |
| Արժութային ֆորվարդ | 47,925,837 | 27,293,893 | - | - | 1,622,588 | - | 675,363 | - | - |
| **Ընդամենը** | 251,914,228 | 506,733,885 | 1,150,912,629 | - | 1,771,245 | 61,539 | 694,841 | - | 36,588 |

## 13. Ներդրումային արժեթղթեր

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **Վաճառքի համար մատչելի ակտիվներ արտարժույթով** | | |
| ***Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով – Չգնանշվող*** | | |
| SWIFT | 1,646 | 917 |
| **Վաճառքի համար մատչելի ակտիվներ տեղական արժույթով** | | |
| ***Պարտքային և հաստատագրված եկամուտով գործիքներ*** | | |
| ՀՀ կառավարության պետական գանձապետական արժեթղթեր | 12,952,668 | 12,124,141 |
| ՀՀ կառավարության ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակ | 77,512,700 | 55,644,010 |
| | **90,465,368** | **67,768,151** |
| ***Սեփական կապիտալի ներդրումներ սկզբնական արժեքով*** | | |
| Այլ ներդրումներ | 16,457,617 | 20,937,614 |
| | **16,457,617** | **20,937,614** |
| **Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ տեղական արժույթով** | **106,922,985** | **88,705,765** |
| **Ընդամենը վաճառքի համար մատչելի ակտիվներ** | **106,924,631** | **88,706,682** |
| **Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ արտարժույթով** | | |
| Արտերկրյա | 137,340,298 | 95,678,521 |
| | **137,340,298** | **95,678,521** |
| **Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ տեղական արժույթով** | | |
| Ձեղչատոկոսային մուրհակ | 4,414,997 | 4,132,916 |
| Արժեզրկման պահուստ | (1,149,081) | - |
| | **3,265,916** | **4,132,916** |
| **Ընդամենը մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ** | **140,606,214** | **99,811,437** |
| **Արժեզրկման պահուստի շարժ** | | |
| Մնացորդը 2011թ. հունվարի 1-ին | - | - |
| Արժեզրկման ծախս | (1,149,081) | - |
| **Մնացորդը 2011թ. դեկտեմբերի 31-ին** | **(1,149,081)** | **-** |

2011 թվականին ՀՀ կառավարության կողմից թողարկվել է 77,512,700 հազար դրամ (2010թ.՝ 55,644,010 հազար դրամ) անվանական արժեքով անտոկոս ցպահանջ հասարակ մուրհակ որպես անհատույց ներդրում Բանկում: Մուրհակը թողարկվել է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն նախորդ ֆինանսական տարվա արդյունքում առաջացած վնասը սեփական կապիտալի պահուստների հանրագումարը գերազանցող գումարի չափով:

Ղեկավարությունը գտնում է, որ մուրհակի հաշվեկշռային արժեքը մոտավորում է դրա իրական արժեքը:

ՀՀ կառավարության վաճառքի համար մատչելի պետական գանձապետական արժեթղթերը չափվում են իրական արժեքով՝ օգտագործելով գնահատման տեխնիկա, որը օգտագործում է ընթացիկ շուկայական տոկոսադրույքներն այդ ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի զեղչելու համար:

## 14. Արժույթի միջազգային հիմնադրամ

***ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ*** *հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ արտարժույթով** | | |
| Բաժնեմասը ԱՄՀ-ում (անդամակցություն) | 54,487,874 | 51,493,341 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում | 21,999,909 | 12,169,283 |
| Հաշվեգրված տոկոսներ | 1,563 | 7,613 |
| | **76,489,346** | **63,670,237** |

Հայաստանի Հանրապետությունը Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) անդամ է: Բանկը հանդես է գալիս որպես Հայաստանի Հանրապետության ԱՄՀ-ում անդամակցության բաժնեմասի պահառու:

Խումբը օգտագործում է ՀՓԻ ԱՄՀ-ում հաշիվը ԱՄՀ-ի հետ գործարքներ կատարելիս: Այս ընթացիկ հաշվի գծով տոկոսները հաշվարկվում են ԱՄՀ-ի կողմից սահմանվող ՀՓԻ տոկոսադրույքով, որը հրապարակվում է շաբաթական կտրվածքով:

***Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ արտարժույթով***

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 (վերահաշվարկված) | 2009 (վերահաշվարկված) |
|---|---|---|---|
| Արժեթղթերի հաշիվ | 140,663,079 | 140,663,079 | 140,663,079 |
| ԱՄՀ-ի հանդեպ պարտավորությունների ճշտման հաշիվ | (2,916,354) | (6,677,555) | 8,523,264 |
| Թիվ 1 հաշիվ | 90,168,906 | 61,814,443 | 23,367,610 |
| Թիվ 2 հաշիվ | 2,842 | 2,754 | 2,630 |
| ՀՓԻ տեղաբաշխում | 52,112,119 | 49,248,152 | 52,125,764 |
| ECF վարկ | 25,906,615 | 32,565,060 | 42,837,498 |
| Հաշվեգրված տոկոսներ | 523,632 | 471,297 | 300,265 |
| | **306,460,839** | **278,087,230** | **267,820,110** |

ԱՄՀ-ի նկատմամբ իր պարտավորությունների մի մասի և ԱՄՀ-ում անդամակցության գումարի համար Խումբը թողարկել է պարտամուրհակ:

Արժեթղթերի հաշիվը, ճշտման հաշիվը և թիվ 1 հաշիվն իրենց մեջ ներառում են Stand-By վարկի, EFF վարկի և անդամակցության գումարները: Թիվ 2 հաշիվը ԱՄՀ-ի կողմից օգտագործվում է վարչական նպատակների համար:

Խումբը ԱՄՀ-ից ստացել է հետևյալ վարկերը՝ ECF, EFF և Stand-By:

ECF (Extended Credit Facility) վարկը ֆինանսական աջակցության տրամադրում է վճարման հաշվեկշռի հետ երկարատև խնդիրներ ունեցող երկրներին: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ECF վարկը անտոկոս է (2010թ.՝ 0%, 2009թ.՝0.5%): Վարկը ենթակա է մարման 2018 թվականի նոյեմբերին:

EFF (Extended Fund Facility) վարկը տրամադրվում է երկրներին միջնաժամկետ վճարման խնդիրների հաղթահարման համար: EFF վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: Վարկը ենթակա է մարման 2022 թվականի փետրվարին: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից EFF վարկի գծով օգտագործված գումարը կազմում է 41,458,142 հազար դրամ (2010թ.՝ 19,589,845 հազար դրամ, 2009թ.՝ 0):

Stand-By վարկը տրամադրվում է ԱՄՀ անդամ երկրներին ճգնաժամի պայմաններում վճարային խնդիրների հաղթահարման համար: Այդ վարկի տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: ԱՄՀ-ը տարեկան 2% հավելատոկոս է հաշվարկում ԱՄՀ-ում անդամակցության գումարի 300%-ը գերազանցող Stand-By և EFF վարկերի գումարի նկատմամբ: Stand-By վարկը ենթակա է մարման 2015 թվականի մարտին: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի կողմից Stand-By վարկի գծով օգտագործված գումարը կազմում է 131,969,653 հազար դրամ (2010թ.՝ 124,716,781 հազար դրամ, 2009թ.՝ 118,051,813 հազար դրամ):

ԱՄՀ անդամ երկրների միջազգային պահուստներն ավելացնելու նպատակով ԱՄՀ-ը ՀՓԻ-ի տեղաբաշխում է իրականացնում անդամ երկրներում: ՀՓԻ-ի տեղաբաշխման տոկոսադրույքը լողացող է և հրապարակվում է ԱՄՀ-ի կողմից շաբաթական կտրվածքով: ՀՓԻ-ի տեղաբաշխումը չունի սահմանված մարման ժամկետ, սակայն կարող է չեղարկվել ԱՄՀ-ի կողմից:

### 15. Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Հակադարձ հետգնման պայմանագրեր | 46,345,414 | 8,022,812 |
| Վարկեր տեղական բանկերին KFW և Համաշխարհային բանկի հետ համաձայնագրերի շրջանակներում | 42,439,125 | 29,643,307 |
| Ստորադաս պայմաններով վարկեր | 30,285,580 | 24,536,382 |
| Հիփոթեքային վերաֆինանսավորում | 21,477,990 | - |
| Այլ վարկեր | 8,697,467 | 8,412,998 |
| | **149,245,576** | **70,615,499** |

#### Վարկերի և հակադարձ հետգնման պայմանագրերի կենտրոնացում

2011թ դեկտեմբերի 31-ի դրությամբ միայն 1 բանկի գծով մնացորդն էր գերազանցում վարկերի և հակադարձ հետգնման պայմանագրերի ընդհանուր գումարի 10%-ը: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ մնացորդը կազմում է 32,597,195 հազար դրամ (2010թ.՝ 3 բանկ 26,618,171 հազար դրամ գումարով):

KFW-ի և Համաշխարհային բանկի հետ պայմանագրերի շրջանակներում վարկեր են տրամադրվել տեղական 14 բանկերի և 4 այլ ֆինանսական կազմակերպությունների, որոնց գծով տոկոսադրույքը կազմում է 5.5%-ից 9%:

Հաշվի առնելով ՀՀ բանկային համակարգի հուսալիությունը և երկարաժամկետ կայունության ապահովումը՝ համակարգի կողմից հավանական ճգնաժամային ռիսկերի զսպման բավարար կարողություններ ապահովելու նպատակով Խմբի կողմից ստորադաս պայմաններով վարկեր են տրամադրվել առևտրային 10 բանկերի 7.5%-ից 8% տոկոսադրույքով և 5 տարի ժամկետով:

Հիփոթեքային վերաֆինանսավորումը ֆինանսական կազմակերպություններին կատարվել է 5.5%-ից 9.5% տոկոսադրույքով և մինչև 13 տարի մարման ժամկետով:

Այլ վարկերի կազմում ընդգրկվել է տեղական բանկերի միաձուլման նպատակով 7.5% տոկոսադրույքով և 2 տարի մարման ժամկետայնությամբ վարկը (2010թ.՝ 7.5%, 3 տարի) 7,324,711 հազար դրամի չափով (2010թ.՝ 7,325,216 հազար դրամ):

Հակադարձ հետգնման համաձայնագրերի առարկա են արժեթղթերը, որոնք թույլատրվում է վաճառել կամ վերագրավադրել: 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հակադարձ հետգնման պայմանագրեր են կնքվել 11 տեղական բանկերի հետ (2010թ.՝ 5 տեղական բանկեր): Այս պայմանագրերի առարկա արժեթղթերի իրական արժեքները ներկայացված են ստորև.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| ՀՀ կառավարության պետական գանձապետական արժեթղթեր | 46,289,474 | 8,131,931 |
| | **46,289,474** | **8,131,931** |

## 16. Հիմնական միջոցներ

*հազար ՀՀ դրամ*

| | Հող և շենքեր | Ցանցեր, համակարգչային և այլ սարքավո-րումներ | Փոխադրա-միջոցներ | Անավարտ շինարա-րություն | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | | | | | |
| Մնացորդը 2010թ. հունվարի 1-ին | 4,398,993 | 6,351,261 | 306,793 | 10,762,869 | 21,819,916 |
| Ավելացում | 195,408 | 719,514 | 10,268 | 10,366,036 | 11,291,226 |
| Օտարում | - | (569,592) | - | - | (569,592) |
| Տեղափոխում | 2,543,324 | 1,476,546 | - | (4,019,870) | - |
| **2010թ. դեկտեմբերի 31-ին** | **7,137,725** | **7,977,729** | **317,061** | **17,109,035** | **32,541,550** |
| Ավելացում | 53,914 | 455,080 | 43,140 | 13,021,550 | 13,573,684 |
| Օտարում | (719,280) | (649,450) | (29,503) | - | (1,398,233) |
| Տեղափոխում | 9,887,781 | 77,911 | - | (9,965,692) | - |
| **2011թ. դեկտեմբերի 31-ին** | **16,360,140** | **7,861,270** | **330,698** | **20,164,893** | **44,717,001** |
| ***Կուտակված մաշվածություն*** | | | | | |
| 2010թ. հունվարի 1-ին | 2,178,974 | 3,711,563 | 166,592 | - | 6,057,129 |
| Ծախս | 116,632 | 573,990 | 40,413 | - | 731,035 |
| Օտարում | - | (558,803) | - | - | (558,803) |
| Տեղափոխում | - | - | - | - | - |
| **2010թ. դեկտեմբերի 31-ին** | **2,295,606** | **3,726,750** | **207,005** | - | **6,229,361** |
| Ծախս | 238,984 | 837,200 | 43,403 | - | 1,119,587 |
| Օտարում | (331,269) | (642,106) | (28,028) | - | (1,001,403) |
| Տեղափոխում | - | - | - | - | - |
| **2011թ. դեկտեմբերի 31-ին** | **2,203,321** | **3,921,844** | **222,380** | - | **6,347,545** |
| ***Զուտ հաշվեկշռային արժեք*** | | | | | |
| 2011թ. դեկտեմբերի 31-ին | 14,156,819 | 3,939,426 | 108,318 | 20,164,893 | 38,369,456 |
| 2010թ. դեկտեմբերի 31-ին | 4,842,119 | 4,250,979 | 110,056 | 17,109,035 | 26,312,189 |

## 17. Ոչ նյութական ակտիվներ

*հազար ՀՀ դրամ*

| | Համակարգչային ծրագրեր |
|---|---|
| ***Սկզբնական արժեք*** | |
| 2010թ. հունվարի 1-ին | 633,222 |
| Ավելացում | 155,272 |
| Օտարում | - |
| **2010թ. դեկտեմբերի 31-ին** | **788,494** |
| Ավելացում | 172,455 |
| Օտարում | (97,971) |
| Տեղափոխում | - |
| **2011թ. դեկտեմբերի 31-ին** | **862,978** |
| ***Ամորտիզացիա*** | |
| 2010թ. հունվարի 1-ին | 205,315 |
| Ծախս | |
| Օտարում | |
| **2010թ. դեկտեմբերի 31-ին** | **205,315** |
| Ծախս | 103,895 |
| Օտարում | (86,621) |
| Տեղափոխում | - |
| **2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **222,589** |
| ***Զուտ հաշվեկշռային արժեք*** | |
| 2011թ. դեկտեմբերի 31-ին | 640,389 |
| 2010թ. դեկտեմբերի 31-ին | 583,179 |

## 18. Այլ ակտիվներ տեղական արժույթով

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ | 5,117,579 | 2,836,231 |
| Դրամագիտական արժեքներ | 960,172 | 739,624 |
| Այլ ակտիվներ | 175,876 | 176,406 |
| | **6,253,627** | **3,752,261** |

Դեբիտորական պարտքերի և կանխավճարների մեջ ներառված են շինարարության հետ կապված տրված կանխավճարները 4,803,352 հազար դրամի չափով (2010թ.՝ 2,209,974 հազար դրամ):

## 19. Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| ***Պարտավորություններ արտարժույթով*** | | |
| Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ | 102,512,913 | 88,236,533 |
| Ավանդների երաշխավորման հիմնադրամի ժամկետային ավանդ | 1,746,015 | 1,684,280 |
| Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ | 87,595 | 9,729,221 |
| | **104,346,523** | **99,650,034** |
| ***Պարտավորություններ տեղական արժույթով*** | | |
| Տեղական բանկերի լորո հաշիվներ և ավանդներ | 166,362,507 | 77,124,832 |
| Այլ իրավաբանական անձանց ընթացիկ հաշիվներ | 465,426 | 3,700,939 |
| | **166,827,933** | **80,825,771** |

*Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդների կենտրոնացում*

2011 և 2010 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ երկու բանկի մնացորդ գերազանցել են Խմբի ընդհանուր ֆինանսական և այլ հաստատությունների ավանդների և հաշիվների մնացորդների 10%-ը: Այդ մնացորդը 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 96,773,190 հազար ՀՀ դրամ (2010թ.՝ 38,596,273 հազար դրամ):

Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի ժամկետային ավանդը մինչև 2012թ. ժամկետայնությամբ և EURIBOR6m տոկոսադրույքով ավանդ է:

## 20. Այլ փոխառություններ

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Վարկեր KFW-ից | 23,338,090 | 16,610,289 |
| Վարկեր Համաշխարհային բանկից | 15,508,204 | 10,989,520 |
| | **38,846,294** | **27,599,809** |

KFW-ի կողմից Խմբին տրամադրվել են վարկեր Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության ֆինանսական համագործակցության միջկառավարական պայմանագրի շրջանակներում, որի նպատակը վարկային հատուկ ծրագրերի ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով

(տես՝ ծանոթագրություն 15): Վարկերի մարման ժամկետայնությունը 2011թ.-ից 2048թ.-ն ընկած ժամանակաշրջանն է: Վարկի օգտագործված մասի գծով տոկոսադրույքը կազմում է 0.75%-ից 2.3%, իսկ չօգտագործված մասի գծով՝ 0.25%: Վարկերի մարումը KFW-ին երաշխավորված է ՀՀ կառավարության կողմից:

Բանկին տրամադրվել են վարկեր Համաշխարհային բանկի կողմից, որի նպատակը փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորումն է տեղական առևտրային բանկերի միջոցով (տես՝ ծանոթագրություն 15): Վարկերի նկատմամբ տոկոսադրույքը կազմում է 0.5%, մարման ժամկետայնությունը 2011թ.-ից 2035թ.-ն ընկած ժամանակաշրջանն է:

Ներկայացված ժամանակաշրջանում Բանկը չի ունեցել մայր գումարի, տոկոսների և այլ գումարների չվճարումներ կամ այլ խախտումներ:

## 21. Այլ պարտավորություններ տեղական արժույթով

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Կրեդիտորական պարտքեր | 2,500,577 | 822,826 |
| Աշխատակիցների ցպահանջ ավանդներ | 755,223 | 531,068 |
| | **3,255,800** | **1,353,894** |

## 22. Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| ***Պարտավորություններ արտարժույթով*** | | |
| Ընթացիկ հաշիվներ | 3,964,955 | 1,187,537 |
| Կրեդիտորական պարտք | 9,979 | 2,801,575 |
| | **3,974,934** | **3,989,112** |
| ***Պարտավորություններ տեղական արժույթով*** | | |
| Ընթացիկ հաշիվներ | 40,130,613 | 27,315,188 |
| Ժամկետային ավանդներ | 40,098,806 | 79,230,385 |
| | **80,229,419** | **106,545,573** |

ՀՀ կառավարության ժամկետային ավանդները կարճաժամկետ են, տոկոսադրույքը կազմում է 10.67%-ից մինչև 11.67% տոկոսադրույքով (2010թ.՝7.4%-8.29%):

## *23. Սեփական կապիտալ*

**Թողարկված կապիտալ**

Բանկի թողարկված կապիտալը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը և չի կարող գրավադրվել, վաճառվել կամ օտարվել:

**Լրացուցիչ կապիտալ**

Լրացուցիչ կապիտալը իրենից ներկայացնում է ցպահանջ անտոկոս հասարակ մուրհակի տեսքով ՀՀ կառավարության կողմից կատարած ներդրումը (տես՝ ծանոթագրություն 13):

**Գլխավոր պահուստ**

Գլխավոր պահուստը ձևավորվում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի համաձայն և ենթակա չէ բաշխման:

## *24. Պայմանական պարտավորություններ*

**Կապիտալ բնույթի պարտավորություններ**

2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապիտալ ներդրումների գծով պարտավորությունները, որոնք վերաբերում են Խմբի շենքերի կապիտալ շինարարությանը, կազմում են 17,720,517 հազար դրամ (2010թ՝ 14,541,725 հազար դրամ):

**Իրավական պարտավորություններ**

Խմբի ղեկավարությանը հայտնի չէ Խմբի դեմ հարուցված որևէ փաստացի, անավարտ կամ սպառնացող էական հայցերի մասին:

**Երաշխիքներ**

2011թ. և 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բանկի կողմից տրամադրված երաշխիքները՝ 658,000 հազար դրամ գումարով, տրվել էին 1994թ.-ից 1995թ. ընկած ժամանակաշրջանում շինարարական ընկերությունների անունից երկրաշարժի գոտու վերակառուցման նպատակով: Երաշխիքներն իրենցից ներկայացնում են չեղյալ չհամարվող հաստատումներ առ այն, որ Բանկը կկատարի վճարումներն այն դեպքում, երբ հաճախորդն ի վիճակի չի լինի կատարել իր պարտականությունները երրորդ կողմերի հանդեպ և կենթարկվի վարկային ռիսկի:

## 25. Գործարքներ կապակցված կողմերի հետ

### Գործարքներ ղեկավար անձնակազմի անդամների հետ

Ստորև ներկայացված է «Աշխատակիցների հատուցումներ, վերապատրաստման ծախսեր և հարակից վճարներ» հոդվածում ներառված ղեկավար անձնակազմի անդամների ընդհանուր վարձատրությունը (տես ծան. 10):

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Ղեկավար անձնակազմը, ներառյալ Բանկի խորհրդի անդամները | 220,502 | 209,580 |
| Սոցիալական ապահովության վճարներ | 18,923 | 18,017 |

Ստորև ներկայացված են 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | Միջին արդյունավետ տոկոսադրույք | 2010 | Միջին արդյունավետ տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | | |
| ***Ակտիվներ*** | | | | |
| Վարկեր | | | | |
| **Մնացորդ հունվարի 1-ին** | **65,674** | | **76,832** | |
| Ավելացում | 6,996 | | 19,837 | |
| Մարում | (35,284) | | (30,973) | |
| Տեղափոխում | (10) | | (22) | |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | **37,376** | **3-5%** | **65,674** | **3-5%** |
| | | | | |
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | | |
| ***Պարտավորություններ*** | | | | |
| Ավանդներ | | | | |
| **Մնացորդ հունվարի 1-ին** | **59,785** | | **43,025** | |
| Ավելացում | 84,945 | | 74,435 | |
| Մարում | (23,525) | | (57,568) | |
| Տեղափոխում | 30 | | (107) | |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | 121,235 | 13.5% | 59,785 | 14% |
| Աշխատավարձի գծով կրեդիտորական պարտք | 7,660 | - | - | - |

Ղեկավար անձնակազմի անդամների հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն** | | |
| Տոկոսային ծախս | (9,574) | (6,142) |
| Տոկոսային եկամուտ | 2,520 | 3,294 |

**Գործարքներ ՀՀ Կառավարության հետ**

Ստորև ներկայացված են 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ Կառավարության հետ գործարքների մնացորդները և միջին արդյունավետ տոկոսադրույքները:

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | Միջին արդյունավետ տոկոսադրույք | 2010 | Միջին արդյունավետ տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | | |
| ***Ակտիվներ*** | | | | |
| ՀՀ կառավարության պետական գանձապետական արժեթղթեր (ծանոթ. 13) | 12,952,668 | 11.5% | 12,124,141 | 11% |
| ՀՀ կառավարության մուրհակ (ծանոթ. 13) | | | | |
| Մնացորդ հունվարի 1-ին | 55,644,010 | | 79,629,720 | |
| Ավելացում | 21,868,690 | | 0 | |
| Մարում | - | | (23,985,710) | |
| **Մնացորդ դեկտեմբերի 31-ին** | 77,512,700 | 0.00% | 55,644,010 | 0.00% |
| ***Պարտավորություններ*** | | | | |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ տեղական արժույթով (ծանոթ. 22) | 80,229,419 | 10% | 106,545,573 | 10% |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության նկատմամբ արտարժույթով (ծանոթ. 22) | 3,974,934 | 0.00% | 3,989,112 | 0.00% |

Տեղական արժույթով ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորություններում ներառված ավանդների շարժը.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Մնացորդ հունվարի 1-ին | 79,230,385 | 131,051,654 |
| Ավելացում | 630,269,499 | 688,363,583 |
| Մարում | (669,401,078) | (740,184,852) |
| Մնացորդ դեկտեմբերի 31-ին | 40,098,806 | 79,230,385 |

ՀՀ կառավարության հետ գործարքների գծով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում արտացոլված գումարները հետևյալն են.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն** | | |
| Տոկոսային եկամուտ | 1,760,350 | 2,305,423 |
| Զուտ օգուտ սփոթ գործարքներից | 2,194,298 | 782,980 |
| Տոկոսային ծախս | (5,613,007) | (13,487,074) |

2011 թվականին Խումբը 371,656 հազար դրամ հաշվեկշռային արժեքով շենք է նվիրաբերել ՀՀ կառավարությանը:

Համաձայն ՀՀ կառավարության հետ կնքված հաշվի սպասարկման պայմանագրի 2012 թվականին Խումբը պարտավորվել է փոխարկել պետական բյուջեի հիմնական արտարժութային մուտքերն ու ելքերը 378.96 ՀՀ դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց փոխարժեքով (2011 թ.՝ 357.98), ինչպես նաև 2011 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարությունը իրավունք ունի գնելու Խմբից ԱՄՆ դոլար 370.17 ՀՀ դրամ մեկ ԱՄՆ դոլարի դիմաց (2010թ.՝ 370.17) փոխարժեքով այնպիսի գումարի չափով, որը կպահանջվի 2009 թվականի մայիսի 20-ին ՀՀ կառավարության և Ռուսաստանի Դաշնության միջև կնքված վարկային պայմանագրի համաձայն ՀՀ կառավարության 500 միլիոն ԱՄՆ դոլար կազմող պարտքի 39.98%-ի (2010թ.՝ 35.40%) սպասարկման համար:

**Գործարքներ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հետ**

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | Միջին արդյունավետ տոկոսադրույք | 2010 | Միջին արդյունավետ տոկոսադրույք |
|---|---|---|---|---|
| **Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն** | | | | |
| **Պարտավորություններ** | | | | |
| Պարտավորություններ տեղական արժույթով) | 6,102 | 0.00% | 119,710 | 0.00% |
| Պարտավորություններ արտարժույթով (ծանոթ. 19) | 1,746,015 | 1.73% | 1,684,280 | 1.13% |

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| **Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն** | | |
| Տոկոսային ծախս | 26,994 | 17,320 |
| Այլ ծախսեր | - | 5,000,000 |

## *26. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ*

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում տարեվերջի դրությամբ արտացոլված դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած էին հետևյալ հոդվածներից.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | 2010 |
|---|---|---|
| Կանխիկ դրամ | 5,013,113 | 7,552,047 |
| Նոստրո հաշիվներ (ծանոթ. 11) | 140,731,605 | 119,776,198 |
| ՀՓԻ ԱՄՀ-ում (ծանոթ. 14) | 21,999,909 | 12,169,283 |
| | **167,744,627** | **139,497,528** |

## 27. Ֆինանսական գործիքների իրական արժեք

Խմբի գնահատմամբ իր ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքները, բացառությամբ սեփական կապիտալի չգնանշված գործիքների իրական արժեքից, էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գնահատված իրական արժեքները, բացառությամբ չգնանշված վաճառքի համար մատչելի ակտիվների, հաշվարկվում են կիրառելով զեղչված դրամական միջոցների հոսքերի տեխնիկան դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի հիման վրա` օգտագործելով հաշվետու ամսաթվի դրությամբ նմանատիպ պայմաններով գործիքի հանդեպ կիրառելի զեղչման դրույքը:

*հազար ՀՀ դրամ*

| | Հաշվեկշռային արժեք 2011 | Իրական արժեք 2011 | Չճանաչված օգուտ/(վնաս) 2011 | Հաշվեկշռային արժեք 2010 | Իրական արժեք 2010 | Չճանաչված օգուտ/(վնաս) 2010 |
|---|---|---|---|---|---|---|
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | | | |
| Կանխիկ դրամ | 5,013,113 | 5,013,113 | - | 7,552,047 | 7,552,047 | - |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 236,415,264 | 236,415,264 | - | 158,102,101 | 158,102,101 | - |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 149,245,576 | 146,152,233 | (3,093,343) | 70,615,499 | 69,409,942 | (1,205,557) |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 76,489,346 | 76,489,346 | - | 63,670,237 | 63,670,237 | - |
| Իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 344,720,503 | 344,720,503 | - | 404,632,917 | 404,632,917 | - |
| ***Ներդրումային արժեթղթեր*** | | | | | | |
| - Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 106,924,631 | 106,924,631 | - | 88,706,682 | 88,706,682 | - |
| - Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 140,606,214 | 140,505,420 | (100,794) | 99,811,437 | 99,804,546 | (6,891) |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | |
| Ֆինանսական և այլ հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 271,174,456 | 271,174,456 | - | 180,475,805 | 180,475,805 | - |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 84,204,353 | 84,204,353 | - | 110,534,685 | 110,534,685 | - |
| Իրական արժեքով` շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 1,771,245 | 1,771,245 | - | 694,841 | 694,841 | - |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 306,460,839 | 306,460,839 | - | 278,087,230 | 278,087,230 | - |
| Թողարկված պարտատոմսեր | 963,593 | 963,593 | - | - | - | - |
| Այլ փոխառություններ | 38,846,294 | 38,846,294 | - | 27,599,809 | 27,599,809 | - |
| **Ընդամենը չճանաչված օգուտ/վնաս** | | | **(3,194,137)** | | | **(1,212,448)** |

Իրական արժեքի այս գնահատականի նպատակն է ներկայացնել այն մոտավոր գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փո-

խանակվել իրազեկ և պատրաստակամ անկախ կողմերի միջև գործարքի ժամանակ: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և կողմնակալ դատողությունները, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես իրացվելի ակտիվների անմիջական վաճառքի կամ պարտավորությունների մարման ժամանակ:

**Իրական արժեքի հիերարխիա**

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ իրական արժեքով չափված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են համաձայն ներկայացված իրական արժեքի հիերարխիայի: Այս հիերարխիան բաժանում է ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները երեք մակարդակների՝ հիմք ընդունելով դրանց իրական արժեքի չափման ժամանակ օգտագործված գործիքների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված).
- Մակարդակ 2 - Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) և թե անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | | | |
|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 325,964,611 | 18,755,892 | - | 344,720,503 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | - | 12,952,668 | - | 12,952,668 |
| Ընդամենը | 325,964,611 | 31,708,560 | - | 357,673,171 |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 3,496 | - | 1,767,749 | 1,771,245 |
| Ընդամենը | 3,496 | - | 1,767,749 | 1,771,245 |
| **Զուտ իրական արժեք** | **325,961,115** | **31,708,560** | **(1,767,749)** | **355,901,926** |

*հազար ՀՀ դրամ*

| | 2010 | | | |
|---|---|---|---|---|
| | Մակարդակ 1 | Մակարդակ 2 | Մակարդակ 3 | Ընդամենը |
| **Ֆինանսական ակտիվներ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 393,650,370 | 10,921,008 | - | 404,571,378 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | - | 12,124,141 | - | 12,124,141 |
| Ածանցյալ ֆինանսական ակտիվներ | 61,539 | - | - | 61,539 |
| Ընդամենը | 393,711,909 | 23,045,149 | - | 416,757,058 |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 19,478 | - | 675,363 | 694,841 |
| Ընդամենը | 19,478 | - | 675,363 | 694,841 |
| **Զուտ իրական արժեք** | **393,692,431** | **23,045,149** | **(675,363)** | **416,062,217** |

### Կարևոր ենթադրություններում փոփոխությունների ազդեցությունը իրական արժեքով չափվող մակարդակ 3-ի ֆինանսական գործիքների իրական արժեքի գնահատման վրա

Այս աղյուսակում ներկայացված են մակարդակ 3-ի ֆինանսական գործիքների իրական արժեքի գնահատումը՝ հնարավոր այլընտրանքային ենթադրությունների ազդեցության ներքո.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | | 2010 | |
|---|---|---|---|---|
| | Հաշվեկշռային արժեքը | Հնարավոր այլընտրանքային ենթադրությունների ազդեցությունը | Հաշվեկշռային արժեքը | Հնարավոր այլընտրանքային ենթադրությունների ազդեցությունը |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 1,767,749 | (347,808) | 675,363 | (135,677) |

Խմբի համար այլընտրանքային ողջամիտ ենթադրությունները որոշելու նպատակով ճշգրտված մոդելը հետևյալն է.

- արժութային ածանցյալ գործիքների համար Խումբը փոփոխել է երկրի վարկային սփրեդի մասին ենթադրությունը՝ նվազեցնելով այն մեկ տոկոսով, որը դիտարկվում է Խմբի կողմից որպես հնարավոր ողջամիտ այլընտրանքների միջակայքի մեջ ընկած՝ հիմք ընդունելով նմանատիպ ռիսկի բնութագրերով երկրների վարկային սփրեդները:

## *28. Ռիսկերի կառավարում*

### Ներածություն

Խմբի գործունեությանը բնորոշ են ռիսկեր: Ռիսկերի կառավարումը Խումբն իրականացնում է բացահայտման, գնահատման և մոնիթորինգի մշտական գործընթացների, ինչպես նաև ռիսկերի սահմանաչափերի հաստատման և ներքին վերահսկողության այլ միջոցառումների միջոցով: Խմբի գործունեությունը ենթարկվում է վարկային, իրացվելիության, շուկայական, ինչպես նաև գործառնական ռիսկերի:

Ռիսկերի անկախ վերահսկման գործընթացը չի ընդգրկում գործարար ռիսկերը, ինչպիսիք են միջավայրի, տեխնոլոգիաների և ոլորտի փոփոխությունը: Նման ռիսկերը վերահսկվում են ռազմավարական պլանավորման գործընթացի միջոցով:

*Ռիսկերի կառավարման կառուցվածք*

Ռիսկերի բացահայտման և վերահսկմանն ուղղված ամբողջ պատասխանատվությունը պատկանում է ՀՀ Կենտրոնական բանկի Խորհրդին, սակայն գոյություն ունեն ռիսկերի կառավարման և վերահսկման համար պատասխանատու առանձին անկախ մարմիններ:

*ՀՀ կենտրոնական բանկի Խորհուրդ*

ՀՀ կենտրոնական բանկի Խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցումների, ռազմավարության և ռիսկերի կառավարման սկզբունքների հաստատման համար:

*Վերստուգիչ խումբ*

Խմբի կողմից իրականացվող ռիսկի կառավարման գործընթացը, յուրաքանչյուր տարի աուդիտի է ենթարկվում ներքին աուդիտի բաժնի կողմից, որն իրականացնում է ինչպես ընթացակարգերի ամբողջականության ստուգում, այնպես էլ վերահսկում է Խմբի գործունեության համապատասխանությունը ընթացակարգերին: Ներքին աուդիտի բաժինը անցկացված ստուգումների արդյունքները քննարկում է Խորհրդի հետ և իր եզրակացություններն ու առաջարկները ներկայացնում է Աուդիտի կոմիտե:

### Ինստիտուցիոնալ հիմքերը

ՀՀ համախառն միջազգային պահուստները ոչ ռեզիդենտների նկատմամբ ՀՀ կենտրոնական բանկի պահանջներն են՝ արտահայտված միայն ազատ փոխարկելի արտարժույթով: Պահուստներն արտացոլվում են ՀՀ կենտրոնական բանկի համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Կենտրոնական բանկը պահուստների կառավարումն իրականացնում է «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 52-րդ հոդվածում նշված սկզբունքներին համապատասխան՝ ներդրումներ կատարելով ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդի կողմից հաստատված գործիքներում:

Պահուստները նախատեսված են արտաքին վճարումների/առևտրի անհավասարակշռությունները ուղղակի ֆինանսավորելու, փոխարժեքի վրա այդ անհավասարակշռությունների ազդեցությունը անուղղակի կարգավորելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների անխոչընդոտ կատարումն ապահովելու համար: Կենտրոնական բանկը պահուստները օգտագործում է ՀՀ կառավարության և պետական գործակալությունների արտարժութային սպասարկման համար, օրինակ՝ արտարժույթի փոխարկման կամ արտաքին պարտքի գծով վճարումների համար:

2007 թվականից ՀՀ կենտրոնական բանկը, որդեգրելով առաջնակարգ կենտրոնական բանկերում գոյություն ունեցող միջազգային լավագույն փորձը, սահմանել է միջազգային պահուստների կառավարման նոր սկզբունքներ: Նախ և առաջ, տարանջատվել են ռազմավարական և մարտավարական որոշումների ընդունման գործառույթները, սահմանվել է դրանց ընդունման պատասխանատվության բաշխումը ՀՀ ԿԲ Խորհրդի, Ներդրումային հանձնաժողովի և պահուստների կառավարումն իրականացնող դիլերների մակարդակներում (Ֆինանսական վարչության Արտաքին շուկաներում գործառնությունների բաժին): Այլ կերպ ասած՝ ներդրվել է որոշումների կայացման եռամակարդակ համակարգ, ըստ որի ՀՀ ԿԲ Խորհրդի կողմից սահմանվում է «Ակտիվների ռազմավարական տեղաբաշխումը», այսինքն՝ պահուստների կառավարման հիմնական սկզբունքները երկարաժամկետ՝ 3 տարի միջակայքի համար: Այդ սկզբունքների ներքո ավելի կարճաժամկետ, մարտավարական ուղենիշերի ընտրության իրավասությունը պատվիրակվել է ՀՀ ԿԲ ներդրումային հանձնաժողովին: Պայուսակի կառավարիչները, իրենց հերթին, ունեն մարտավարական ուղենիշերի և թույլատրելի ակտիվ ռիսկի սահմաններում ընթացիկ կառավարման որոշումներ կայացնելու իրավասություններ:

**Կառավարում և վերահսկողություն**

Ըստ Խմբի կառուցվածքի՝ ՀՀ միջազգային պահուստների կառավարման համար պատասխանատու է Ֆինանսական վարչությունը: Ֆինանսական վարչության բաժիններից մեկը՝ Արտաքին շուկաներում գործառնությունների բաժինը, իրականացնում է պահուստների ամենօրյա կառավարման հետ կապված գործառնություններ: Նույն վարչության Միջազգային ռիսկերի կառավարման բաժինը պատասխանատու է ռիսկերի գնահատման, ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և ուղենիշերի մշակման, սահմանաչափերի պահպանման մոնիթորինգի, ինչպես նաև պահուստների կառավարման կատարողականի գնահատման համար:

Պահուստների կառավարման հետ կապված խնդիրներն ամսական պարբերականությամբ քննարկվում են Բանկի Ներդրումային հանձնաժողովի կողմից, որում ընդգրկված են պահուստների կառավարման գործընթացում ներգրավված բոլոր ստորաբաժանումների ղեկավարները, ինչպես նաև Բանկի նախագահը և նախագահի տեղակալը: Հանձնաժողովը նախկինում բացառապես խորհրդատվական մարմին էր, սակայն կառավարման եռամակարդակ համակարգի ներդրումից հետո վերջինիս շնորհվել է որոշումներ կայացնելու իրավասություն: Պահուստների կառավարման կատարողա-

կանի վերաբերյալ Ֆինանսական վարչությունը եռամսյակային պարբերականությամբ զեկուցում է Ներդրումային հանձնաժողովին և կիսամյակային պարբերականությամբ՝ ՀՀ կենտրոնական բանկի Խորհրդին: Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ Կառավարությանը և Ազգային ժողովին է ներկայացնում միջազգային պահուստների վիճակի և կազմի մասին տեղեկատվություն և հրապարակում է այն:

Պահուստների կառավարման գործընթացի կանոնակարգվածությունը վերահսկվում է Բանկի վերստուգիչ խմբի կողմից, որը զեկուցում է Խորհրդին:

### Ակտիվների տեղաբաշխումը և ռիսկերի կառավարումը

Համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի մասին ՀՀ օրենքի 52-րդ հոդվածի՝ ՀՀ միջազգային պահուստները կառավարվում են առաջին հերթին իրացվելիության և անվտանգության պատշաճ մակարդակի ապահովման պայմաններում եկամտաբերության մաքսիմալացման սկզբունքով: Այս նպատակով ՀՀ Կենտրոնական բանկի Ֆինանսական վարչությունը մշակում է ակտիվների ռազմավարական տեղաբաշխման և մարտավարական ուղենիշերի նախագծերը, որոնք հաստատվում են համապատասխանաբար ՀՀ ԿԲ Խորհրդի և Ներդրումային հանձնաժողովի կողմից: Ներդրումային ուղենիշերը ներառում են ներդրումային գործընթացը կարգավորող բոլոր սահմանաչափերը և պահանջները, ինչպես նաև ակտիվների այն կառուցվածքը, որը համապատասխանում է ՀՀ ԿԲ Խորհրդի կողմից պահուստների կառավարմանը ներկայացվող սկզբունքներին:

### Վարկային ռիսկ

Վարկային ռիսկն այն ռիսկն է, որի պատճառով Խումբը կարող է կրել վնասներ՝ հաճախորդների կամ գործընկերների պարտավորությունների չկատարման դեպքում: Խումբն իրականացնում է վարկային ռիսկի վերահսկում և կառավարում՝ ռիսկի առավելագույն չափի սահմանման միջոցով, որը Խումբը կարող է ընդունել ըստ առանձին գործընկերների, աշխարհագրական կամ ոլորտային ռիսկի կենտրոնացումների, ինչպես նաև սահմանված ռիսկի սահմանաչափերի պահպանման վերահսկողության միջոցով:

Խումբը մշակել է վարկային որակի ստուգման ընթացակարգ՝ ապահովելու գործընկերների վճարունակության հնարավոր փոփոխությունների վաղաժամկետ հայտնաբերումը: Միջազգային շուկաներում գործընկերների վարկային որակը գնահատելու համար ՀՀ Կենտրոնական բանկը օգտագործում է միջազգային հեղինակավոր վարկանշային կազմակերպությունների կողմից ֆինանսական կազմակերպություններին շնորհված վարկանիշները:

ՀՀ կենտրոնական բանկը սահմանում է նվազագույն ընդունելի վարկանիշներ պետական, պետական գործակալությունների, այլ պաշտոնական մարմինների և վերազգային կազմակերպությունների արժեթղթերի թողարկողների կամ թողարկումների համար, որոնց երկարաժամկետ վարկանիշը չի կարող ցածր լինել AA-(S&P)/Aa3 (Moody’s), իսկ կարճաժամկետ վարկանիշը՝ A1+(S&P)/P1(Moody’s) մակարդակներից:

Ֆինանսական ներդրումների վարկային ռիսկի մոնիթորինգի համար կիրառվում է ներքին ռեսուրսներով մշակված մոդելը: Վերջինս գործընկերոջ բաժնետոմսերի գների վարքագծի, ինչպես նաև մի շարք հաշվեկշռային ցուցանիշների հիման վրա թույլ է տալիս գնահատել ընկերության անվճարունակության հավանականությունը՝ ըստ շուկայի մասնակիցների: Այն պատկանում է կառուցվածքային մոդելների տիպին, որն ընկերության անվճարունակությանը տալիս է տնտեսագիտորեն իմաստալից բացատրություն՝ հիմնվելով ակտիվների և պարտավորությունների կառուցվածքի, ինչպես նաև պարտքի չափի վրա: Մոդելը հիմնված է սահմանային օպցիոնի գնի հաշվարկման բանաձևի վրա, որը նաև հեղինակավոր FITCH վարկանշային կազմակերպության կողմից ընկերություններին շնորհվող վարկանիշերի բաղադրիչներից մեկն է: Վարկանիշների և կիրառվող մոդելի արդյունքների հիման վրա կառուցվում է ըստ վարկանիշների և ժամկետայնությունների, առանձին գործընկերների և գործիքների գծով ներդրումների առավելագույն ծավալների սահմանաչափերի մատրիցը, որը և վարկային ռիսկի կառավարման հիմնական գործիքն է:

*Ածանցյալ ֆինանսական գործիքներ*

Վարկային ռիսկը, որն առաջանում է ածանցյալ ֆինանսական գործիքներից, ժամանակի ցանկացած պահին սահմանափակվում է դրական իրական արժեքով հաշվառվող ածանցյալ գործիքներով, որոնք ճանաչված են համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

*Վարկային ռիսկի առավելագույն չափը՝ առանց գրավի կամ այլ վարկային ապահովման*

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է 2011 և 2010թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի՝ վարկային ռիսկին ենթարկվելու վատագույն տարբերակը՝ առանց ապահովվածությունը հաշվի առնելու:

*հազար ՀՀ դրամ*

| | Ծանոթ. | Համախառն առավելագույն ռիսկի չափ 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ | Համախառն առավելագույն ռիսկի չափ 2010թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ |
|---|---|---|---|
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 11 | 246,831,046 | 158,102,101 |
| Իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ | 12 | 344,720,503 | 404,632,917 |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 15 | 149,245,576 | 70,615,499 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 13 | 106,924,631 | 88,706,682 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | 13 | 141,755,295 | 99,811,437 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 14 | 76,489,346 | 63,670,237 |
| **Ընդամենը վարկային ռիսկ** | | 1,065,966,397 | 885,538,873 |

Երբ ֆինանսական գործիքները հաշվառվում են իրական արժեքով, վերևում ներկայացված գումարները ցույց են տալիս ընթացիկ ռիսկը, բայց ոչ առավելագույնը, որը կարող է առաջանալ ապագայում իրական արժեքների փոփոխություններից:

**Վարկային ռիսկն ըստ ֆինանսական ակտիվների դասերի**

Ֆինանսական ակտիվների վարկային որակը կառավարվում է ներքին վարկանիշերի միջոցով: Ստորև ներկայացված աղյուսակը ցույց է տալիս համախմբված ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ տեղ գտած վարկերի հետ կապված հոդվածների բաշխումն ըստ դասերի՝Խմբում ընդունված ներքին վարկանիշերին համապատասխան: Ստորև ներկայացված աղյուսակում Խմբի բարձր վարկանիշ ունեցող բանկերին և հաճախորդներին տրամադրված վարկերը նվազագույն վարկային ռիսկ ունեցող վարկերն են՝ սովորաբար վարկանիշ ունեցող կամ իրացվելի գրավով ապահովված: Կայուն ֆինանսական վիճակում գտնվող և վարկի լավ սպասարկում ապահովող այլ վարկառուներին տրվում է ստանդարտ վարկանիշ: Ստանդարտից ցածր վարկանիշ է տրվում այն վարկառուներին, որոնք ունեն ստանդարտից ցածր վարկանիշ, բայց անհատապես արժեզրկված չեն: Պարտատոմսերի համար բարձր վարկանիշը համապատասխանում է Moody's-ի կողմից նշանակված Baa3 վարկանիշը, սուբ-ստանդարտ վարկերի համար՝ Baa3 վարկանիշից ցածր, իսկ ստանդարտ վարկերի համար՝ B3-ից ցածր վարկանիշը:

*հազար ՀՀ դրամ*

| | Ծանոթ. | Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված | | | Անհատապես արժեզրկված 2011 | Ընդամենը 2011 |
|---|---|---|---|---|---|---|
| | | Բարձր վարկանիշով 2011 | Ստանդարտ վարկանիշով 2011 | Ստանդարտից ցածր վարկանիշով 2011 | | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 11 | 212,050,966 | - | - | 24,364,298 | 236,415,264 |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 15 | - | 149,245,576 | - | - | 149,245,576 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | | 1,646 | 106,922,985 | - | - | 106,924,631 |
| Մինչև մարումը պահվող ակտիվներ | 13 | 137,340,298 | - | - | 3,265,916 | 140,606,214 |
| **Ընդամենը** | | **349,392,910** | **256,168,561** | | **27,630,214** | **633,191,685** |

*հազար ՀՀ դրամ*

| | Ծանոթ. | Ոչ ժամկետանց և ոչ արժեզրկված | | | Ընդամենը 2010 |
|---|---|---|---|---|---|
| | | Ստանդարտից բարձր 2010 | Ստանդարտ 2010 | Ստանդարտից ցածր 2010 | |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 11 | 125,300,174 | 32,801,927 | - | 158,102,101 |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 15 | - | 70,615,499 | - | 70,615,499 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | | 917 | 88,705,765 | - | 88,706,682 |
| Մինչև մարումը պահվող ակտիվներ | 13 | 95,678,521 | 4,132,916 | - | 99,811,437 |
| **Ընդամենը** | | **220,979,612** | **196,256,107** | **-** | **417,235,719** |

**Արժեզրկման գնահատում**

Վարկերի արժեզրկումը գնահատելու հիմնական գործոնները հետևյալն են. արդյոք տոկոսների և մայր գումարի վճարումները ժամկետանց են ավելի քան 30 օր, արդյոք հայտնի են գործընկերների որևէ ֆինանսական դժվարությունների, նրանց վարկային վարկանիշի նվազման կամ պայմանագրի սկզբնական պայմանների

խախտման դեպքեր: Խումբն արժեզրկման գնահատումն իրականացնում է երկու պահուստների մակարդակով. անհատական և խմբային հիմունքներով գնահատվող պահուստներ:

**Անհատապես գնահատվող պահուստներ**

Խումբը սահմանում է յուրաքանչյուր անհատապես էական վարկի պահուստի ստեղծման անհրաժեշտությունը: Պահուստների չափի որոշման ժամանակ հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները. գործընկերոջ գործարար-ծրագրի կայունությունը, ֆինանսական բարդությունների ծագման դեպքում նրա ունակությունները բարելավելու գործունեության արդյունքները, սնանկացման պարագայում՝ կանխատեսվող ստացվելիք գումարները և ակնկալվող վճարման ենթակա շահաբաժինների գումարները, ֆինանսական օգնության ներգրավման հնարավորությունը, ապահովման իրացման արժեքը, ինչպես նաև ակնկալվող դրամական միջոցների ժամկետները: Արժեզրկումից վնասները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ կամ ավելի հաճախ, եթե չնախատեսված իրավիճակը պահանջում է ավելի մեծ ուշադրություն:

**Խմբային հիմունքով գնահատվող պահուստներ**

Անհատապես էական չհանդիսացող վարկերի (ներառյալ՝ վարկային քարտերը, հիփոթեքային վարկերը և չապահովված սպառողական վարկերը), ինչպես նաև անհատապես էական, բայց անհատապես արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշներ չունեցող վարկերի գծով պահուստները գնահատվում են խմբային հիմունքներով: Պահուստները գնահատվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, այդ թվում յուրաքանչյուր վարկային պայուսակ դիտարկվում է առանձին:

Խմբային հիմունքով գնահատման դեպքում որոշվում է պայուսակի արժեզրկումը, որը կարող է տեղի ունենալ նույնիսկ անհատական արժեզրկման օբյեկտիվ ցուցանիշների բացակայության դեպքում: Արժեզրկումից վնասները որոշվում են հետևյալ տեղեկատվության հիման վրա. պայուսակի գծով նախորդ ժամանակաշրջանների վնասները, ընթացիկ տնտեսական պայմանները, մոտավոր ժամանակահատվածը՝ սկսած հնարավոր կորստի պահից մինչև այն պահը, երբ կհաստատվի այն, որ պահանջվում է անհատապես գնահատվող արժեզրկման պահուստի ստեղծումը, ինչպես նաև ստացման ենթակա ակնկալվող գումարները և ակտիվի արժեզրկումից հետո արժեքի վերականգնումը: Ստորաբաժանման ղեկավարությունը պատասխանատվություն է կրում այդ ժամանակահատվածի որոշման համար, որը կարող է տևել մինչև մեկ տարի: Այնուհետև արժեզրկման պահուստը ստուգվում է Խմբի քաղաքականության համապատասխանության տեսանկյունից՝ Խմբի վարկային ստորաբաժանման կողմից:

Ֆինանսական երաշխիքների և ակրեդիտիվների գծով արժեզրկման գնահատումն ու պահուստի ստեղծումն իրականացվում է նույն կերպ, ինչպես վարկերինը:

Ստորև ներկայացված աղյուսակում ներառված են Խմբի ակտիվները և պարտավորություններն ըստ աշխարհագրական համակենտրոնացման.

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | | | |
|---|---|---|---|---|
| | Հայաստան | ՏՀԶԿ | ԱՊՀ և այլ երկրների բանկեր | Ընդամենը |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 5,013,113 | - | - | 5,013,113 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | – | 212,049,951 | 24,365,313 | 236,415,264 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | – | 344,720,503 | – | 344,720,503 |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 149,245,576 | – | – | 149,245,576 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 106,922,985 | 1,646 | – | 106,924,631 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | – | 137,340,298 | 3,265,916 | 140,606,214 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | – | 76,489,346 | – | 76,489,346 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 39,009,845 | – | – | 39,009,845 |
| Այլ ակտիվներ | 7,481,713 | – | – | 7,481,713 |
| | **307,673,232** | **770,601,744** | **27,631,229** | **1,105,906,205** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | 398,777,362 | - | - | 398,777,362 |
| Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ | 271,126,358 | 48,098 | - | 271,174,456 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 1,767,750 | 3,495 | - | 1,771,245 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 84,204,353 | - | - | 84,204,353 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | - | 306,460,839 | - | 306,460,839 |
| Այլ փոխառություններ | - | 38,846,294 | - | 38,846,294 |
| Թողարկված պարտատոմսեր | 963,593 | - | - | 963,593 |
| Այլ պարտավորություններ | 3,409,701 | - | - | 3,409,701 |
| | **760,249,117** | **345,358,726** | **-** | **1,105,607,843** |
| | | | | |
| **Զուտ ակտիվներ/(պարտավորություններ)** | **(452,575,885)** | **425,243,018** | **27,631,229** | **298,362** |

*հազար ՀՀ դրամ*

| | 2010 | | | |
|---|---|---|---|---|
| | Հայաստան | ՏՀԶԿ | ԱՊՀ և այլ երկրների բանկեր | Ընդամենը |
| **Ակտիվներ** | | | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 7,552,047 | - | - | 7,552,047 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատու-թյուններում տեղաբաշխված միջոցներ | - | 125,299,120 | 32,802,981 | 158,102,101 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | - | 404,632,917 | - | 404,632,917 |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 70,615,499 | - | - | 70,615,499 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | 88,705,765 | 917 | - | 88,706,682 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | - | 95,678,521 | 4,132,916 | 99,811,437 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | - | 63,670,237 | - | 63,670,237 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 26,895,368 | - | - | 26,895,368 |
| Այլ ակտիվներ | 4,626,753 | - | - | 4,626,753 |
| | **198,395,432** | **689,281,712** | **36,935,897** | **924,613,041** |
| **Պարտավորություններ** | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | 348,164,734 | - | - | 348,164,734 |
| Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ | 180,404,021 | 71,784 | - | 180,475,805 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 675,363 | 19,478 | - | 694,841 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 110,534,685 | - | - | 110,534,685 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | - | 278,087,230 | - | 278,087,230 |
| Այլ փոխառություններ | - | 27,599,809 | - | 27,599,809 |
| Թողարկված պարտատոմսեր | - | - | - | - |
| Այլ պարտավորություններ | 1,499,990 | - | - | 1,499,990 |
| | **641,278,793** | **305,778,301** | **-** | **947,057,094** |
| **Զուտ ակտիվներ/(պարտավորություններ)** | **(442,883,361)** | **383,503,411** | **36,935,897** | **(22,444,053)** |

**Իրացվելիության ռիսկ և ֆինանսական միջոցների կառավարում**

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Խումբը սովորական կամ չկանխատեսված իրավիճակում չի կարողանա կատարել իր պար-տավորությունները վերջիններիս մարման ժամանակ: ՀՀ կենտրո-

նական բանկը, որպես Կառավարության բանկային գործակալ և երկրի գլխավոր դրամավարկային մարմին, պատասխանատու է պետական պարտքի սպասարկման, Կառավարության արտաքին վճարումների սպասարկման, ինչպես նաև ներքին շուկայում ազգային արժույթի կտրուկ տատանումների հարթեցման համար: Այս տեսանկյունից, կարևորվում է իրացվելիության ծավալների ճիշտ կանխատեսումն ու կառավարումը:

Հաշվի առնելով պահուստների կառավարման նպատակները և խմբավորելով իրացվելիության պահանջ առաջացնող գործոններն ըստ հրատապության, ՀՀ միջազգային պահուստները բաժանվել են 3 մասի՝ գործառնական, իրացվելի և ներդրումային պայուսակների: Եթե առաջին երկուսը նախատեսվում են կարճաժամկետ/պահային և միջնաժամկետ իրացվելիության ապահովման համար, ապա վերջինի նպատակը հարստության կուտակումն է:

Տրանշների նպատակները պայմանավորում են նաև դրանց կառավարման քաղաքականությունը՝ ուղենիշերի ընտրությունը, կառավարման պասիվ կամ ակտիվ տարբերակի ընտրությունը:

*Մինչև մարման ժամկետը մնացած ֆինանսական պարտավորությունների վերլուծությունը*

Ստորև ներկայացվում է դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ֆինանսական պարտավորությունների բաշխումը՝ հաշվետու ամսաթվից մինչև չզեղչված պարտավորությունների պայմանագրերում նշված մարմանը մնացած ժամկետների համաձայն: Պարտավորությունները, որոնք ենթակա են ցպահանջ մարման, դասակարգվում են այնպես, ինչպես եթե մարման պահանջը ներկայացված լիներ ամենավաղ հնարավոր ամսաթվով: Սակայն Խումբը գտնում է, որ շատ հաճախորդներ չեն պահանջի ամենավաղ հնարավոր ամսաթվի դրությամբ վճարումը, որի գծով Խումբը պարտավորված կլինի կատարել վճարումը, և աղյուսակը չի արտացոլում ակնկալվող դրամական հոսքերը՝ հաշվարկված Խմբի կողմից՝ անցյալ ժամանակաշրջանների ներդրումների պահանջների տեղեկատվության հիման վրա:

*հազար ՀՀ դրամ*

| 2011 | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ | 1 - 3 ամիս | 3 - 12 ամիս | 1-5 տարի | 5 տարուց ավելի | Առանց մարման ժամկետի | Ընդամենը |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | - | - | - | - | - | 398,777,362 | 398,777,362 |
| Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ | 269,428,441 | 7,460 | 1,768,724 | - | - | - | 271,204,625 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 1,771,245 | - | - | - | - | - | 1,771,245 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 44,105,548 | 40,497,830 | - | - | - | - | 84,603,378 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 106,618,215 | - | 45,125,117 | 131,504,618 | 23,809,952 | - | 307,057,902 |
| Այլ փոխառություններ | - | - | 360,427 | 17,886,032 | 26,255,488 | - | 44,501,947 |
| Թողարկված պարտատոմսեր | - | - | 1,000,000 | - | - | - | 1,000,000 |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | **421,923,449** | **40,505,290** | **48,254,268** | **149,390,650** | **50,065,440** | **398,777,362** | **1,108,916,459** |

*հազար ՀՀ դրամ*

| 2010 | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Ցպահանջ կամ մեկ ամսից քիչ | 1 - 3 ամիս | 3 - 12 ամիս | 1-5 տարի | 5 տարուց ավելի | Առանց մարման ժամկետի | Ընդամենը |
| **Ֆինանսական պարտավորություններ** | | | | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | - | - | - | - | - | 348,164,734 | 348,164,734 |
| Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և մնացորդներ | 180,489,100 | - | - | - | - | - | 180,489,100 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | 694,841 | - | - | - | - | - | 694,841 |
| Պարտավորություններ ՀՀ կառավարության հանդեպ | 83,771,724 | 27,156,571 | - | - | - | - | 110,928,295 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 120,364,074 | - | 8,523,491 | 148,181,976 | 1,487,336 | - | 278,556,877 |
| Այլ փոխառություններ | - | - | 238,146 | 1,585,982 | 30,393,480 | - | 32,217,608 |
| Թողարկված պարտատոմսեր | | | | | | | |
| **Ընդամենը չզեղչված ֆինանսական պարտավորություններ** | 385,319,739 | 27,156,571 | 8,761,637 | 149,767,958 | 31,880,816 | 348,164,734 | 951,051,455 |

### Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի փոփոխության ռիսկն է՝ շուկայական գների, ներառյալ փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների, և սեփական կապիտալի գների փոփոխության արդյունքում: Խումբը դասակարգում է շուկայական ռիսկն ըստ առևտրային և ոչ առևտրային պայուսակների: Առևտրային պայուսակի շուկայական ռիսկը կառավարվում և վերահսկվում է զգայունության վերլուծության մեթոդաբանությամբ: Ոչ առևտրային ռիսկերը կառավարվում և վերահսկվում են օգտագործելով այլ զգայունության վերլուծություն: Բացի արտարժույթի գերկենտրոնացման ռիսկից, Խումբը չունի այլ զգալի գերկենտրոնացման ռիսկ:

### Շուկայական ռիսկ՝ ոչ առևտրային պայուսակ

*Տոկոսադրույքի փոփոխման ռիսկ*

Տոկոսադրույքի ռիսկը Բանկի ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի կամ դրանց իրական արժեքի հնարավոր փոփոխության ռիսկն է՝ տոկոսադրույքների փոփոխման արդյուն-

քում: Հետևյալ աղյուսակում ներկայացված է Խմբի համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության զգայունությունը տոկոսադրույքների հնարավոր փոփոխությունների նկատմամբ, ընդ որում բոլոր այլ տվյալները հաստատուն փոփոխականներ են:

Եռամակարդակ կառավարման ներքո ՀՀ ԿԲ Խորհուրդը սահմանում է այսպես կոչված՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը», որը նախանշում է երկարաժամկետում պահուստների կառավարման ընթացքում տոկոսադրույքի ռիսկի ընդունելի սահմանները: ՀՀ ԿԲ Խորհրդի՝ «ռիսկի նկատմամբ իր հանդուրժողականության աստիճանը» արտահայտվում է որոշակի ժամանակահատվածում (ներկայումս 3 տարի) և որոշակի հավանականությամբ (95%) ակնկալվող եկամտաբերության նվազագույն մակարդակի տեսքով: Նշված տրամաբանությունից ելնելով ակտիվների օպտիմալ տեղաբաշխման մարտավարական ուղենիշերի ընդունման իրավասությունը պատվիրակվել է Ներդրումային հանձնաժողովին:

Ուղենիշերի սահմանման հիմնական նպատակը եկամտաբերության մաքսիմալացումն է ավելի կարճ (մեկ տարի) ժամանակահատվածում: Այդ որոշումների հիմքում, ի տարբերություն ռազմավարականների, դրվում են շուկայի ընթացիկ միտումները և կանխատեսումները: Օպտիմալ պայուսակի ընտրության նպատակով եկամտաբերության և ռիսկայնության գնահատումն իրականացվում է ապագա հնարավոր սցենարների մշակման միջոցով՝ մասնավորապես օգտագործելով VAR-MGARCH մոդելի սիմուլյացիաների միջոցով ստացված եկամտաբերության կորի արդյունքները, ինչպես նաև սեփական և շուկայի այլ մասնակիցների փորձագիտական կանխատեսումները տոկոսադրույքների և վարկային սփրեդների վերաբերյալ: Օպտիմալ պայուսակի ընտրությունը կատարվում է Մարկովիցի մոդելի միջոցով, սակայն որոշակի սահմանափակումների պայմաններում:

Ինչ վերաբերում է ռիսկի մոնիթորինգին, ապա շուկայական ռիսկի ընթացիկ վերահսկման և պահուստների կառավարման արդյունավետությունը գնահատելու նպատակով ռիսկերի կառավարման ստորաբաժանման կողմից հաշվարկվում են միջազգային պրակտիկայում ընդունված մի շարք այլ ցուցանիշներ (Առանցքային կետի դյուրացիա, Ինֆորմացիոն գործակից, Սփրեդ դյուրացիա, PCA դյուրացիա և հետևման սխալ (tracking error)):

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի կապիտալի զգայունությունը, որը հաշվարկվում է վերագնահատելով վաճառքի համար մատչելի հաստատուն տոկոսադրույքով ակտիվները, 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմք ընդունելով տոկոսադրույքների ենթադրվող փոփոխությունները: Կապիտալի զգայունությունը վերլուծվում է ըստ ակտիվի ժամկետների: Կապիտալի ընդհանուր զգայունությունը հիմնված է այն ենթադրության վրա, որ եկամտաբերության կորում կան զուգահեռ փոփոխություններ:

*հազար ՀՀ դրամ*

| Արժույթ | Եկամտաբերության կորի փոփոխությունը 2011 | Ազդեցությունը կապիտալի վրա 2011 | Եկամտաբերության կորի փոփոխությունը 2010 | Ազդեցությունը կապիտալի վրա 2010 |
|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | +6.57% | (3,529,492) | +6.57% | (4,105,305) |
| ՀՀ դրամ | -6% | 3,223,281 | -6% | 3,749,137 |

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս Խմբի շահույթի զգայունությունը, որը հաշվարկվել է ֆինանսական ակտիվները իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով վերագնահատելով՝ ելնելով տոկոսադրույքների փոփոխման ենթադրությունից:

| Արժույթ | Բազիսային կետերի աճ 2011 | Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2011 | Բազիսային կետերի աճ 2010 | Զուտ տոկոսային եկամտի զգայունութծը 2010 |
|---|---|---|---|---|
| ՀՓԻ | 15 | (305,308) | 100 | (1,813,855) |
| ՀՀ դրամ | 15 | (17,890) | 100 | (51,491) |
| ԱՄՆ դոլար | 15 | (23,216) | 100 | (109,505) |
| Եվրո | 15 | (11,879) | 100 | (17,456) |

| Արժույթ | Բազիսային կետերի նվազում 2011 | Զուտ տոկոսային եկամտի զգայունությունը 2011 | Բազիսային կետերի նվազում 2010 | Զուտ տոկոսային եկամտի զգայունութծը 2010 |
|---|---|---|---|---|
| ՀՓԻ | -15 | 305,308 | -25 | 453,464 |
| ՀՀ դրամ | -15 | 17,890 | -25 | 12,873 |
| ԱՄՆ դոլար | -15 | 23,216 | -25 | 27,376 |
| Եվրո | -15 | 11,879 | -25 | 4,364 |

*Արտարժույթի ռիսկ*

Արտարժույթի ռիսկը արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների հետևանքով ֆինանսական գործիքների արժեքի տատանման ռիսկն է: ՀՀ Կենտրոնական բանկի Խորհուրդը սահմանել է արտարժութային դիրքերի սահմանաչափեր՝ հիմնվելով կանոնակարգերի վրա: Դիրքերը վերահսկվում են օրական կտրվածքով:

Հետևյալ աղյուսակը ցույց է տալիս այն արտարժույթները, որոնք կարող են ազդել 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Խմբի ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների և դրանց կանխատեսված դրամական հոսքերի վրա: Վերլուծությունը հաշվարկում է արտարժույթի ՀՀ դրամի նկատմամբ հնարավոր տատանումների ազդեցությունը այլ հավասար պայմաններում շահույթի կամ վնասի վրա (պայմանավորված արտարժույթի նկատմամբ զգայուն ոչ առևտրային դրամային ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխմամբ): Աղյուսակում հանդիպող բացասական արժեքը արտացոլում է շահույթում կամ վնասում կամ կապիտալում հնարավոր զուտ նվազում, մինչդեռ դրական արժեքը ցույց է տալիս հնարավոր զուտ աճ:

| Արժույթ | Փոխարժեքի աճ % 2011 | Ազդեցությունը շահույթի վրա 2011 | Փոխարժեքի աճ % 2010 | Ազդեցությունը շահույթի վրա 2010 |
|---|---|---|---|---|
| Եվրո | 17.23% | 32,384,098 | 25.00% | 40,947,634 |
| Բրիտանական ֆունտ | 14.18% | 6,484,220 | 17.58% | 4,361,370 |
| Ճապոնական իեն | 16.46% | 11,276,229 | 25.00% | 19,156,602 |
| ԱՄՆ դոլար | 11.13% | 30,866,071 | 10.15% | 27,399,128 |
| ՀՓԻ | 14.18% | (32,611,118) | 17.58% | (37,685,905) |

| Արժույթ | Փոխարժեքի նվազում % 2011 | Ազդեցությունը շահույթի վրա 2011 | Փոխարժեքի նվազում % 2010 | Ազդեցությունը շահույթի վրա 2010 |
|---|---|---|---|---|
| Եվրո | -17.23% | (32,384,098) | -25.00% | (40,947,634) |
| Բրիտանական ֆունտ | -14.18% | (6,484,220) | -17.58% | (4,361,370) |
| Ճապոնական իեն | -16.46% | (11,276,229) | -25.00% | (19,156,602) |
| ԱՄՆ դոլար | -11.13% | (30,866,071) | -10.15% | (27,399,128) |
| ՀՓԻ | -14.18% | 32,611,118 | -17.58% | 37,685,905 |

Պահուստների արժութային կազմը որոշվում է յուրաքանչյուր իրացվելիության տրանշի համար առանձին, յուրաքանչյուր տրանշի ստեղծման հիմքում ընկած գործոնները հեջավորելու նպատակով: ՀՀ արտաքին պարտքը պահուստներ ունենալու հիմնական պատճառն է և արտարժույթի պահանջարկի խթանման հիմնական գործոնն է: Հետևաբար, պահուստների արժութային կազմը հիմնականում արտացոլում է պարտքի արժութային կառուցվածքը: Կարճաժամկետ իրացվելիության տրանշի արժութային կառուցվածքը պայմանավորված է արտաքին առևտրի հետևանքով առաջացած արժույթների հոսքերով, ինչպես նաև հնարավոր միջամտման կարիքներով և ընթացիկ ծախսերով: Արժութային կառուցվածքը ենթակա է վերանայման տարեկան առնվազն 2 անգամ:

*Վաղաժամկետ մարման ռիսկ*

Վաղաժամկետ մարման ռիսկը Խմբի ֆինանսական վնաս կրելու ռիսկն է այն հետևանքով, որ նրա հաճախորդները և գործընկերները կմարեն կամ կպահանջեն մարել պարտավորությունները ավելի շուտ կամ ուշ, քան ենթադրվում էր:

Խումբը օգտագործում է ռեգրեսիվ մոդելը կանխավճարների տարբեր մակարդակների փոփոխության իր զուտ տոկոսային եկամտի վրա ազդեցությունը նախագծելու համար: Մոդելը տարբերակում է տարբեր մարումների պատճառները (օրինակ՝ տեղաբաշխում, վերաֆինանսավորում և վերաբանակցություն) և հաշվի է առնում որևէ կանխավճարի պատժամիջոցների ազդեցություն: Մոդելը վերափորձարկվում է փաստացի արդյունքների նկատմամբ:

Ստորև ներկայացված է մինչև հարկումը շահույթի և կապիտալի վրա ազդեցությունը այն դեպքում, եթե մարման ենթակա ֆինանսական գործիքների 10%-ը մարված է տարեսկզբի դրությամբ, այլ պարամետրերն ընդունվում են որպես անփոփոխ մեծություններ.

| | Ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա |
|---|---|
| 2011 | (20,362) |
| 2010 | (25,393) |

**Գործառնական ռիսկ**

Գործառնական ռիսկը համակարգի խափանման, աշխատակազմի կողմից թույլ տրված սխալների, խարդախությունների կամ արտաքին գործոնների հետևանքով հնարավոր կորուստի ռիսկն է: Երբ ներքին վերահսկողության համակարգը դադարում է գործել, գործառնական ռիսկերը կարող են վնաս հասցնել համբավին, ունենալ իրավական հետևանքներ կամ բերել ֆինանսական վնասներ: Խումբը չի ենթադրում, որ բոլոր գործառնական ռիսկերը վերացված են, սակայն ներքին վերահսկողության համակարգի օգնությամբ և հնարավոր ռիսկերի որոշման և համապատասխան ռեակցիայի միջոցով Խումբը կարող է կառավարել նման ռիսկերը: Ներքին վերահսկողության համակարգը նախատեսում է պարտավորությունների, մուտքի թույլատվության, համադրման և հաստատման ընթացակարգերի, աշխատակազմի ուսուցման արդյունավետ բաժանում, ինչպես նաև գնահատման ընթացակարգերի բաժանումը՝ ներառյալ ներքին աուդիտը:

## 29. Ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետների վերլուծություն

Աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ժամկետայնությունը 2011 և 2010 թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Քանի որ Խմբի ֆինանսական գործիքների մեծ մասն ունի հաստատագրված դրույքներ, պայմանագրային մարման ժամկետները ներկայացնում են նաև պայմանագրային տոկոսադրույքի վերանայման ամսաթվերը:

*հազար ՀՀ դրամ*

| | 2011 | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մինչև 1 ամիս | 1 - 3 ամիս | 3 - 12 ամիս | 1 - 5 տարի | 5 տարուց ավելի | Առանց մարման ժամկետի | Ժամկե-տանց | Ընդամենը |
| **Ակտիվներ** | | | | | | | | |
| Կանխիկ դրամ | 5,013,113 | - | - | - | - | - | - | 5,013,113 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 140,884,367 | 91,637,197 | - | - | - | - | 3,893,700 | 236,415,264 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 344,720,503 | - | - | - | - | - | - | 344,720,503 |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 1,890,545 | 47,354,230 | 6,048,985 | 69,099,271 | 24,852,545 | - | - | 149,245,576 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | - | - | 78,299,365 | 4,662,508 | 7,503,495 | 16,459,263 | - | 106,924,631 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | - | 89,011,650 | 48,358,880 | 3,235,684 | - | - | - | 140,606,214 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 22,001,472 | - | - | - | 54,487,874 | - | - | 76,489,346 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 39,009,845 | - | 39,009,845 |
| Այլ ակտիվներ | 7,481,713 | - | - | - | - | - | - | 7,481,713 |
| **Ընդամենը ակտիվներ** | **521,991,713** | **228,003,077** | **132,707,230** | **76,997,463** | **86,843,914** | **55,469,108** | **3,893,700** | **1,105,906,205** |
| | | | | | | | | |
| **Պարտավորություններ** | | | | | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | - | - | - | - | - | 398,777,362 | - | 398,777,362 |
| Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 269,428,441 | - | 1,746,015 | - | - | - | - | 271,174,456 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | - | 148,657 | 1,622,588 | - | - | - | - | 1,771,245 |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ | 44,105,548 | 40,098,805 | - | - | - | - | - | 84,204,353 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 106,618,215 | - | 45,125,117 | 131,045,420 | 23,672,087 | - | - | 306,460,839 |
| Այլ փոխառություններ | - | - | 202,464 | 15,719,569 | 22,924,261 | - | - | 38,846,294 |
| Թողարկված պարտատոմսեր | - | - | 963,593 | - | - | - | - | 963,593 |
| Այլ պարտավորություններ | 3,409,701 | - | - | - | - | - | - | 3,409,701 |
| Ընդամենը պարտավորություններ | **423,561,905** | **40,247,462** | **49,659,777** | **146,764,989** | **46,596,348** | **398,777,362** | **-** | **1,105,607,843** |
| | | | | | | | | |
| **Զուտ ակտիվներ/ (պարտավորություններ) 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **98,429,808** | **187,755,615** | **83,047,453** | **(69,767,526)** | **40,247,566** | **(343,308,254)** | **3,893,700** | **298,362** |

*հազար ՀՀ դրամ*

| | 2010 | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | **Մինչև 1 ամիս** | **1 - 3 ամիս** | **3 - 12 ամիս** | **1 - 5 տարի** | **5 տարուց ավելի** | **Առանց մարման ժամկետի** | **Ընդամենը** |
| **Ակտիվներ** | | | | | | | |
| Կանխիկ դրամ | 7,552,047 | - | - | - | - | - | 7,552,047 |
| Բանկերում և այլ ֆինանսական հաստատություններում տեղաբաշխված միջոցներ | 119,902,034 | 32,748,474 | 5,451,593 | - | - | - | 158,102,101 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 404,632,917 | - | - | - | - | - | 404,632,917 |
| Վարկեր և հակադարձ հետգնման պայմանագրեր | 6,704,810 | 3,201,300 | 2,179,257 | 56,109,584 | 2,420,548 | - | 70,615,499 |
| Վաճառքի համար մատչելի ակտիվներ | - | - | 56,636,853 | 1,533,497 | 9,597,802 | 20,938,530 | 88,706,682 |
| Մինչև մարման ժամկետը պահվող ակտիվներ | - | 53,178,981 | 43,321,077 | 3,311,379 | - | - | 99,811,437 |
| ԱՄՀ-ում տեղաբաշխված միջոցներ | 12,176,896 | - | - | - | 51,493,341 | - | 63,670,237 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | - | - | - | - | - | 26,895,368 | 26,895,368 |
| Այլ ակտիվներ | 4,626,753 | - | - | - | - | - | 4,626,753 |
| **Ընդամենը ակտիվներ** | **555,595,457** | **89,128,755** | **107,588,780** | **60,954,460** | **63,511,691** | **47,833,898** | **924,613,041** |
| | | | | | | | |
| **Պարտավորություններ** | | | | | | | |
| Թղթադրամներ և մետաղադրամներ շրջանառության մեջ | - | - | - | - | - | 348,164,734 | 348,164,734 |
| Բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների ավանդներ և հաշիվների մնացորդներ | 180,475,805 | - | - | - | - | - | 180,475,805 |
| Իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ | - | 694,841 | - | - | - | - | 694,841 |
| Պարտավորություններ ՀՀ Կառավարության հանդեպ | 56,421,717 | 54,112,968 | - | - | - | - | 110,534,685 |
| Պարտավորություններ ԱՄՀ-ի հանդեպ | 120,364,074 | - | 8,523,491 | 147,798,146 | 1,401,519 | - | 278,087,230 |
| Այլ փոխառություններ | - | - | 153,187 | 1,512,203 | 25,934,419 | - | 27,599,809 |
| Այլ պարտավորություններ | 1,499,990 | - | - | - | - | - | 1,499,990 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **358,761,586** | **54,807,809** | **8,676,678** | **149,310,349** | **27,335,938** | **348,164,734** | **947,057,094** |
| | | | | | | | |
| **Զուտ ակտիվներ/ (պարտավորություններ) 2011թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ** | **196,833,871** | **34,320,946** | **98,912,102** | **(88,355,889)** | **36,175,753** | **(300,330,836)** | **(22,444,053)** |